ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻՆ

ՀՀ ԵՎ ԱՀ /ԼՂ/ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2022

Հեղինակներ՝ Արմինե Սադիկյան

Նազելի Մովսեսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ներկայացնում է 2021 թվականին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Արցախի Հանրապետության/Լեռնային Ղարաբաղի (ԱՀ/ԼՂ) զինված ուժերում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տվյալները, որոնք հավաքագրվել են զանգվածային լրատվամիջոցներով և պաշտոնական աղբյուրներով տարածված տեղեկությունների, ինչպես նաև Կազմակերպության կողմից պաշտոնական կառույցներին (ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ քննչական կոմիտե) ուղղված տեղեկատվության հարցումների պատասխանների հիման վրա:

Մեր կողմից ամփոփած տեղեկությունների համաձայն 2021 թ. ընթացքում ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում գրանցվել է 76 զինծառայողի մահվան դեպք:

Մահվան **76 դեպքերի պատճառներն են.**

- **19-ը՝ հրադադարի ռեժիմի խախտում,**
- **17-ը՝ առողջական խնդիրներ,**
- **15-ը՝ ավտովթար** (որից 2-ը՝ վրաերթի հետևանքով մահվան դեպք է, որը դատախազության կողմից ներառվել է ավտովթարի հետևանքով մահվան դեպքերի թվի մեջ),
- **11-ը՝ սպանություն** (3-ը որակվել է որպես՝ 2 կամ ավելի անձանց սպանություն, 4-ը՝ մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում, 2-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտում (ԶՕԿ), 1-ը՝ սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանկաով, 1-ը՝ դիտավորյալ սպանություն),
- **9-ը՝ ինքնասպանություն կամ ինքնասպանության հասցնել**,
- **5-ը՝ դժբախտ պատահար** (1-ը՝ ձնահյուս, 1-ը՝ կայծակնահարում, 1-ը՝ ավտոմքենայի դետալի հարված, 1-ը՝ ծառի տապալում, 1-ը՝ հանկարծամահ, որը դատախազության կողմից ներառվել է դժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքերի թվի մեջ):

Հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահացած 19 զինծառայողներից 2-ը վիրավորում են ստացել 2020 թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին՝ պատերազմական գործողությունների ժամանակ և մահացել են 2021 թ.-ին:

6 զինծառայող մահացել է 2021 թ. նոյեմբերին հայ-ադրբեջանական շփման գծում ծավալված ռազմական գործողությունների հետևանքով:

Համեմատության համար նշենք, որ 2020 թ. գրանցվել է պատերազմական գործողությունների հետ անմիջական առնչություն չունեցող 100 **զինծառայողի մահվան դեպք** (տե՛ս աղյուսակ 1), որից

- **25-ը՝ առողջական խնդիրների** հետևանքով են,
- **22-ը՝ ավտովթարի,**
- **18-ը՝ ինքնասպանության կամ ինքնասպանության հասցնելու**,
- **17-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման,**
- **9-ը՝ դժբախտ պատահարի** (3-ը՝ ձնահյուսի, 1-ը՝ ձորն ընկնելու, 1-ը՝ մեքենայում բռնկված հրդեհի, 1-ը՝ տրակտորի շրջվելու, 1-ը՝ մեղվի խայթոցի, 1-ը՝ էթիլ սպիրտով թունավորման, 1-ը՝ տանը շինարարական աշխատանքների ժամանակ տեղի ունեցած փլուզման հետևանքով),
- **4-ը՝ սպանության** (2-ը՝ դիտավորյալ, 1-ը՝ խուլիգանական դրդումներով սպանության, 1-ը՝ այլ հանցանքը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով կատարված սպանության),
- **3-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման**,
- **1-ը՝ մարտական հերթապահություն/ ծառայություն կրելու կանոնների խախտման,**
- **1-ը՝ ականի պայթյունի**:

Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2020 - 2021 թթ մահացած զինծառայողների թիվն ըստ պատճառների և ամիսների:

Գծապատկեր 1. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 2020 - 2021 թթ. մահացած զինծառայողների թիվն ըստ պատճառների և ամիսների



Այսպես, 2021 թ. մահվան դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել

- **նոյեմբերին՝ 12 դեպք,** որից 7-ը հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ սպանության, 1-ը՝ ավտովթարի, 1-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ ինքնասպանության հետևանքով,
- **մայիսին** արձանագրվել է **11 դեպք, որից** 3-ը՝ ինքնասպանության, 3-ը՝ ավտովթարի, 2-ը առողջական խնդիրների 1-ը՝ սպանության, 1-ը հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով,
- **հուլիսին և օգոստոսին և սեպտեմբերին արձանագրվել է 8-ական** դեպք, որից հուլիսին 4-ը հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ ավտովթարի, 1-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ սպանության հետևանքով, օգոստոսին՝ 3-ը սպանության, 2-ը հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ առողջական խնդիրների հետևանքով, սեպտեմբերին՝ 2-ը սպանության հետևանքով, 2-ը՝ առողջական խնդիրների, 1-ը հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը՝ ինքնասպանության, 1-ը՝ ավտովթարի, 1-ը դժբախտ պատահարի:
- **հունվարին և դեկտեմբերին՝ 7-ական դեպք, որից** հունվարին՝ 3-ը ավտովթարի, 2-ը դժբախտ պատահարի, 1-ը առողջական խնդիրների, 1-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով, դեկտեմբերին՝ 2-ը հրադադարի ռեժիմի խախտման, 2-ը՝ սպանության, 2-ը՝ ավտովթարի, 1-ը՝ առողջական խնդիրների հետևանքով:
- **հոկտեմբերին 4** դեպք առողջական խնդիրների հետևանքով,
- **մարտին, ապրիլին, հունիսին՝ 3-ական** դեպքեր, որից մարտին՝ 2-ը առողջական խնդիրների, 1-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով, ապրիլին՝ 2-ը ավտովթարի, 1-ը ինքնասպանության հետևանքով, հունիսին՝ 2-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ ավտովթարի հետևանքով,
- **փետրվարին՝ 2** դեպք, որից 1-ը՝ հրադադարի ռեժիմի խախտման, 1-ը առողջական խնդիրների հետևանքով:

Ամփոփելով 2021 թ. զինծառայողների մահվան դեպքերի պատճառները՝ նկատենք, որ շարունակում է մտահոգիչ մնալ ինքնասպանության և սպանության հետևանքով մահվան դեպքերի վիճակագրությունը: Ի դեպ, սպանության 11 դեպքերից 3-ն արձանագրել են մեկ ամսվա՝ օգոստոսի ընթացքում, իսկ ինքնասպանության 9 դեպքերից 3-ն արձանագրվել են մայիս ամսվա ընթացքում:

Համեմատելով 2020 և 2021 թթ. մահվան դեպքերի պատճառները՝ արձանագրում ենք, որ 2021 թվականին

- **12 %-ով (2-ով) ավելացել են հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերը,**
- **ավելի քան կրկնակի (7-ով) ավելացել են սպանության դեպքերը:**

Միաժամանակ պետք է նշել, որ ***ինքնասպանության, առողջական խնդիրների, ավտովթարի, դժբախտ պատահարների*** հետևանքով մահվան դեպքերը նվազել են 2021 թվականին: Այսպես 2020 թվականի համեմատ 2021 թվականին

- **50 %-ով (9-ով) նվազել են ինքնասպանության հետևանքով դեպքերը,**
- **32 %-ով (8 ով) նվազել են առողջական խնդիրների հետևանքով դեպքերը,**
- **32 %-ով (7-ով) նվազել են ավտովթարի հետևանքով մահվան դեպքերը,**
- **44 %-ով (4-ով) նվազել են դժբախտ պատահարի հետևանքով մահվան դեպքերը:** *(տես գծապատկեր 2)*

Գծապատկեր 2. 2020 և 2021 թթ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացության դեպքերն ըստ պատճառների



Ամփոփելով վերոշարադրյալը՝ արձանագրում ենք, որ չնայած 2020 թ. համեմատ 2021 թ. արձանագրված մահացության դեպքերի թիվը նվազել է, դեպքերի գերակշիռ մասը՝ 75 %-ը, կրկին տեղի են ունեցել ոչ մարտական պայմաններում, մասնավորապես՝ 22 %-ը առողջական խնդիրների, 20 %-ը՝ ավտովթարի, 12 %-ը՝ ինքնասպանության, 15 %-ը՝ սպանության, 7 %-ը՝ դժբախտ պատահարի հետևանքով, իսկ մարտական պայմաններում՝ հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերի թիվը կազմում է մահացության դեպքերի ընդհանուր թվի 25 %-ը:

2021 թ-ին մահացած **76** զինծայողներից միայն **39**-ի մահվան մասին է տարածվել **պաշտոնական հաղորդագրություն**, 6 դեպքի մասին (4-ը ավտովթարի հետևանքով, 1-ը՝ դժբախը պատահարի, 1-ը՝ ինքնասպանության) տեղեկություն է տարածվել միայն լրատվամիջոցներով, իսկ 31 դեպքի մասին ընդհանրապես տեղեկություն **չի տարածվել:** Նշված 31 դեպքերից 27-ի մասին Կազմակեպությունը տեղեկացել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունից, 2 դեպքի մասին Կազմակերպությանը հայտնի է դարձել այլ պաշտոնական աղբյուրից, ևս 2 դեպքի մասին Կազմակերպությունը տեղեկացել է այլ՝ ոչ պաշտոնական աղբյուրից, որը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից՝ Կազմակերպության տեղեկատվության հարցմանն ի պատասխան գրությամբ: Ի դեպ, վերջին երկու դեպքի մասին հայտնելիս, Դատախազությունը տեղեկացրել է, որ նախկինում դրանց մասին Կազմակերպությանը չի հայտնել, քանի որ դրանց վերաբերյալ տվյալները ՀՀ զինվորական կենտրոնական դատախազությունում ստացվել են Կազմակերպության նախորդ հարցման պատասխանն ուղարկելուց հետո:

Դիտարկելով պաշտոնապես չհրապարակված 37 դեպքերը՝ արձանագրենք, որ դրանցից 30-ը համարվել են զինվորական ծառայության հետ չկապված, 7-ը՝ կապված: Վերոգրյալից կարելի է նկատել, որ նույնիսկ երբ մահվան դեպքերը պաշտոնական կառույցի կողմից որակվել են որպես ծառայության հետ կապված, դրանց մասին տեղեկությունները չեն հրապարակվել:

Կարող ենք փաստել, որ պաշտոնական մարմինների կողմից չի դրսևորվում հաշվետվողականություն մարդու իրավունքների խախտման, տվյալ դեպքում

զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու առումով, եւ պետական կառույցները շարունակում են մահվան փաստերի մասին հրապարակային տեղեկություններ չհայտնել:

2021 թ-ին մահացած 76 զինծառայողներից **34-ը՝ պայմանագրային** զինծառայողներ են, **23-ը պարտադիր ժամկետային**, **11-ը՝ սպա, 4-ը՝ պահեստազորային**, **4-ը՝ ենթասպա**:

Մահացած պահեստազորայիններից մեկը զորահավաքային զորակոչի միջոցով ծառայություն անցնող զինծառայող է եղել, ով վիրավորվել է 2020 թ-ի հոկտեմբերին և մահացել 2021 թ-ին: Ի դեպ, 2020 թ. վիրավորված և 2021 թ. մահացած ևս մեկ զինծառայող հանդիսացել է պայմանագրային զինծառայող:

Եվս երկու պահեստազորային զինծառայողներ մահացել են 2021 թ-ի սեպտեմբերին՝ ՀՀ կառավարության որոշմամբ հայտարարված[1] պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքների ընթացում՝ ծառայակցի կողմից մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտման հետևանքով: Մյուս պահեստազորայինը հանդիսացել է պահեստազորի սպա, ով մահացել է դժբախտ պատահարի հետևանքով՝ մեքենան նորոգելիս (դետալը հարվածել է վերջինիս գլխին):

Համեմատության համար նշենք, որ 2020 թ-ի մահացած 100 զինծառայողներից **33**-ը եղել են **պայմանագրային** զինծառայող, **23**-ը՝ **սպա, 21**-ը՝ **պարտադիր ժամկետային**, **17-ը՝ պահեստազորային, 5**-ը՝ **ենթասպա, 1-ը՝ կամավոր**:

Ավելի մանրամասն ներկայացնենք 2021 թ. զինծառայողների մահվան որոշ դեպքերի պատճառները:

❖ ***Ինքնասպանություն և սպանություն***

Դիտարկելով 2021 թ. **ինքնասպանության հետևանքով 9 և սպանության հետևանքով 11 զինծառայողների մահացության դեպքերը**՝ կարող ենք արձանագրել, որ դրանք միասին կազմում են մահացության ընդհանուր թվի շուրջ 31 %-ը: Նույն պատճառներով մահվան

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=155278

դեպքերը 2020 թ. (ինքնասպանության 18 դեպք, սպանության 4 դեպք) կազմում են մահացության ընդհանուր թվի շուրջ 22 %-ը:

Նշենք, որ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից ինքնասպանություն դասակարգված մեկ դեպքում քրեական գործ է հարուցվել նաև ապօրինի կերպով զենք կրելու և ապօրինի կերպով զենք պահելու հիմքով: Մասնավորապես՝ դեպքն արձանագրվել է սպայի կողմից տանը նռնակ պայթեցնելու հետևանքով, ինչի արդյունքում մահացել է նաև վերջինիս հղի կինը:

Անդրադառնալով ինքնասպանության դեպքերին՝ հարկ ենք համարում նշել, որ ՀՀ գլխավոր դատախազության կողմից 2021 թվականին պարզվել է , որ 2016 թ. ապրիլի և 2020 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ժամանակահատվածում պատերազմական գործողությունները ուղղակի և բացասական ազդեցություն են ունեցել ոչ միայն ներկայումս զինծառայությունը շարունակող, այլ նաև պատերազմական գոծողություններին որպես կամավոր կամ պահեստազորային մասնակցած անձանց, ինչպես նաև պատերազմի հետևանքով զոհված կամ անհայտ կորած անձանց հարազատների հոգեբանական վիճակի վրա:

2021 թ. հուլիսին ՀՀ գլխավոր դատախազությունը տարածած հաղորդագրությամբ[2] ներկայացրել է ինքնասպանության 2 և ինքնասպանության փորձի 1 դեպք, որոնք պատերազմական գործողությունների հետ են պայմանավորված: Ինքնասպանություն գործած անձանցից մեկը եղել է 2020 թ. պատերազմական գործողություններին մասնակցած կամավորականէ, իսկ մյուսը՝ զինծառայողի հայր, որոնց մոտ առաջացել են հոգեբանական խնդիրներ:

Եվս 1 անձ, ով որպես կամավորական մասնակցել է 2016 և 2020 թթ. պատերազմական գործողություններին, զանգահարել է ԱԻՆ և հայտնել, որ կյանքին վերջ տալու նպատակով գտնվում է Երևան քաղաքի «Կինյան» կամրջի մոտ: Հետագայում նա բացատրություն է տվել այն մասին, որ 2020 թ. պատերազմի ավարտից հետո չի կարողանում քնել, քանի որ աչքերին զոհված զինծառայողների դիակներ են երևում, մշտապես վախի զգացողություն ունի և ապրելու ցանկություն չունի:

Նշված դեպքերը կրկին անգամ վկայում են զինծառայողներին և հատկապես պատերազմական գործողությունների մասնակցածներին և նրանց հարազատներին, այդ

[2] https://www.prosecutor.am/am/mn/8209/

թվում՝ կամավորականներին, անվճար, արդյունավետ, անհետաձգելի և շարունակական հոգեբանական աջակցություն ցուցաբերելու խիստ անհրաժեշտության մասին։

Նշենք, որ 2021 թ. հունվարին Կազմակերպությունը տեղեկատվություն ստանալու հարցմամբ դիմել էր ՀՀ պաշտպանության նախարարություն՝ խնդրելով տրամադրել տեղություն պատերազմական գործողություններին մասնակցած զինծառայողներին տրամադրված հոգեբանական աջակցմանը եւ վերականգնմանն ուղղված աշխատանքների իրականացման վերաբերյալ։

Ի պատասխան ՀՀ ՊՆ-ը տեղեկացրել է, որ պատերազմական գործողությունների սկզբից մինչև 2021 թ. փետրվարը զինծառայողների, պահեստազորայինների և կամավորականների հետ ըստ անհրաժեշտության իրականացվում են հոգեբանական առաջին օգնության և վերականգնման աշխատանքներ։ Մասնավորեցվել է, որ մինչև նշված ժամանակահատվածը՝ 2021 թ. փետրվարը, անհրաժեշտ հոգեբանական աջակցություն է ցուցաբերվել շուրջ 6000 և ավելի վիրավոր զինծառայողների, պահեստազորայինների, կամավորականների, ինչպես նաև իրականացվել է 1900-ից ավելի տնայց՝ Երևանում և հանրապետության բոլոր մարզերում։ Հոգեբանական աջակցման և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու նպատակով ԶՈՒ սպա հոգեբանների հետ համատեղ, նշված աշխատանքներում ներգրավվել են բուհական, քաղաքացիական բուժհաստատությունների, հոգեբանական օգնության կենտրոնների և հասարակական կազմակերպությունների շուրջ 150 կամավոր հոգեբան մասնագետներ։ ՀՀ ՊՆ-ն հայտնում է նաև, որ զինծառայողներին հոգեբանական աջակցություն տրամադրվում է զորամասերում՝ սպա-հոգեբանների միջոցով, իսկ հետտրավմատիկ խանգարումների, սրացումների ու հոգեթերապևտիկ ստացիոնար բուժում ենթադրող այլ խնդիրների պարագայում զինծառայողները տեղափոխվում են համապատասխան զինվորական հոսպիտալներ, քաղաքացիական բուժհաստատություններ և ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տան անձնակազմի հետտրավմատիկ հոգեվերականգնողական հավաքական բաժանմունք։

Միաժամանակ ՀՀ պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ ԶՈՒ կողմից ձեռք են բերվել համաձայնություններ հոգեբանական օգնության կենտրոնների հետ՝ զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին՝ ըստ անհրաժեշտության,

անվճար (կամավորական սկզբունքով) հոգեբանական օգնության ծառայություններ մատուցելու համար: Նշվել է, որ հոգեբանական աջակցության և վերականգնողական աշխատանքների տևողությունը պայմանավորված է տվյալ անձի մոտ դրսևորվող խնդիրների առանձնահատկություններից:

ՀՀ պաշտպանության նախարարությունը նաև տեղեկացրել է, որ պատերազմի ընթացքում մարտական գործողություններին մասնակցած և նրանց հետ առնչություն ունեցող անձանց հոգեբանական աջակցության ծառայությունը 2021 թ. փետրվարից հետո իրականացնում է ՀՀ Կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի «Ադրբեջանի Հանրապետության կողմից 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողություններին մասնակցած անձանց և հանրության հոգեբանական վերականգնման» մասին թիվ 131-Ն[3] որոշմամբ հայտարարված մրցույթը[4] հաղթած հոգեբանական առողջության «Կոնսորցիում»-ը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համակարգմամբ:

Այնուամենայնիվ, ՀՀ ՊՆ կողմից գաղտնի են համարվել հոգեբանական աջակցություն ստացած զինծառայողների համակազմերի և նրանց ծառայության տեսակի վերաբերյալ տեղեկությունները:

Հարկ ենք համարում նշել, որ 2021 թ. ընթացքում Կազմակերպություն են դիմել զինծառայողներ, ովքեր, մասնակցելով պատերազմական գործողություններին, ձեռք են բերել հոգեբանական խնդիրներ, սակայն գտնում են, որ ՀՀ ՊՆ կողմից իրենց տրամադրված հոգեբանական աջակցությունը ադյունավետ չի եղել: Ավելին, մեկ դեպքում զինծառայողին ցուցվել է նյարդաբանի և հոգեբանի խորհրդատվություն, սակայն իրականացվել է միայն նյարդաբանի խորհրդատվություն, իսկ հոգեբանական աջակցություն չի ցուցաբերվել նույնիսկ ցուցված լինելու դեպքում:

Արձանագրում ենք, որ չնայած պետության կողմից անվճար տրամադրվող հոգեբանական աջակցության ապահովման համար կիրառված ջանքերին, դրանք բավարար չեն զինծառայողների հոգեբանական վիճակի ամբողջական վերականգնման համար, և անհրաժեշտ է առավել արդյունավետ դարձնել զինծառայողներին տրամադրվող հոգեբանական աջակցությունը:

[3] https://www.e-gov.am/gov-decrees/item/35548/
[4] https://www.e-gov.am/u_files/file/decrees/kar/2021/01/131_1.pdf

Ինչ վերաբերում է սպանության հետևանքով մահվան դեպքերին, ապա նշենք, որ այն դեպքերում, երբ զինծառայողը մահացել է ծառայակցի կողմից զենքի օգտագործման կամ մարտական հերթապահության կամ մարտական հերթապահության կազմակերպման կանոնների խախտման հետևանքով, Կազմակերպության կողմից նշված դեպքերը ներառվում են «սպանություն» ենթադասակարգման մեջ:

Այսպես, 2021 թ. արձանագրված 11 նման դեպքերից 4-ը որակվել է որպես մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում, 3-ը՝ երկու կամ ավելի անձանց սպանություն, 2-ը՝ զենքի օգտագործման կանոնների խախտում, 1-ը՝ դիտավորյալ սպանություն, 1-ը՝ սպանություն շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով:

Հատկանշական է, որ «մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում» որակված սպանության չորս դեպքերից երկուսն արձանագրվել են նույն օրը, սակայն պաշտոնապես տեղեկացվել է դրանցից միայն մեկի մասին: Ընդ որում, զինծառայողները հանդիսացել են պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքների շրջանակներում զորակոչված անձինք:

Պահեստազորայինների եռամսյա հավաքների ընթացքում մահվան նման փաստերը կարող են վկայել հավաքների ընթացքում զինվորական կարգապահության ապահովման, և զինվորական վերապատրաստման կազմակերպման ընթացքում թերացումների մասին, քանի որ ակնհայտ է, որ զենքի օգտագործման և մարտական հերթապահության իրականացման պրակտիկայի հետ տևական ժամանակ առնչություն չունեցող անձինք կարիք ունեն պատշաճ վերապատրաստման:

❖ ***Առողջական խնդիրներ***

Առողջական խնդիրների հետևանքով 17 մահացության դեպքերը կազմել են մահացության ընդհանուր դեպքերի 22 %-ը: Դրանցից միայն 2-ն են ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից համարվել զինվորական ծառայության հետ կապված, որոնցից 1-ի հետևանքով մահացել է պարտադիր ժամկետային զինծառայող, մյուսի հետևանքով՝ պայմանագրային:

Առողջական խնդիրների պատճառներով մահվան դեպքերում հիմնականում չեն նշվում, թե ինչպես և ինչ գործոնների ազդեցության հետևանքով են առաջացել խնդիրները: Չի բացահայտվում, թե արդյոք պարտադիր ժամկետային զինծառայության զորակոչվելիս անձի մոտ արձանագրված են եղել առողջական խնդիրներ, թե դրանք առաջացել են զինծառայության ընթացքում:

Առողջական խնդիրների հետևանքով «ծառայության հետ կապված» դասակարգված միակ ժամկետային զինծառայողի մահվան դեպքի մասին պաշտոնական աղբյուրներից ստացված տեղեկատվության հիման վրա Կազմակերպությանը պարզել է դարձել, որ ժամկետային զինծառայողը առողջական վիճակի վատթարացման արդյունքում դիմել է զորամասի բուժկետ, ժամանակին չի ներկայացվել բժշկական հետազոտության, վերջինիս ինքնազգացողությունը ավելի է վատացել, և նա տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, որտեղ ևս բավարար բժշկական հետազոտություն չի իրականացվել, և կրկին տեղափոխվել է այլ բժշկական կենտրոն: Բժշկական կենտրոնի բուժանձնակազմը իր մասնագիտական պարտականությունները պատշաճ կերպով չի կատարել, ինչի արդյունքում զինծառայողը մահացել է:

«ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքը[5] սահմանում է զինծառայողների սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, բուժկանխարգելիչ միջոցառումները, մասնավորապես՝ օրենքի հոդված 344-ը սահմանում է, որ զինծառայողների առողջական վիճակի բժշկական հսկողությունն իրականացվում է հետևյալ ուղիներով՝

- անձնակազմի ամենօրյա հսկողություն մարտական նախապատրաստության ընթացքում և կենցաղում,
- զինծառայողների բուժզննում,
- զինծառայողների խորացված և հսկիչ-բժշկական քննություն, պլանային բուժզննումներ:

Առողջական խնդիրների պատճառով ծառայության հետ չկապված դասակարգված 15 մահվան դեպքերի հետեւանքով, ըստ պաշտոնական տվյալների, մահացել է 7 պայմանագրային զինծառայող, 6 սպա, 2 ենթասպա:

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121817

Ինչ վերաբերում է նշված զինծառայողների մահվան հանգամանքներին, ապա պաշտոնական աղբյուրից ստացված տեղեկության համաձայն՝ 5 դեպքում զինծառայողները գտնվել են տանը կամ հանգստի մեջ (նշված 5 դեպքից միայն մեկ դեպքում հայտնի է, որ զինծառայողը մահացել է ինֆարկտից), 1 դեպքում զինծառայողի ինքնազգացողությունը վատացել է երթուղային ավտոբուսում և մահացել է շտապօգնության մեքենայում, 6-ը մահացել են տարբեր բժշկական կենտրոններում, 1 դեպքում հայտնի չէ՝ ինչ պայմաններում է արձանագրվել զինծառայողի մահը (միայն հայտնի է, որ զինծառայողը մահացել է սրտի կաթվածից), մյուս 2 դեպքերում, որոնց մասին Դատախազության կողմից Կազմակերպությանը տեղեկացվել է ավելի ուշ, զինծառայողները մահացել են քաղցկեղից, ընդ որում, նրանցից 1-ը մահացել է բժշկական հաստատությունում, իսկ մյուսը՝ տանը:

Հատկանշական է, որ առողջական խնդիրների հետևանքով մահվան վերոնշյալ երկու դեպքից բացի, մյուս դեպքերում պաշտոնական աղբյուրի կողմից հիմնականում չի մասնավորեցվել, թե ինչ հիվանդություններ են ունեցել վերջիններս, արդյոք դրանք եղել են քրոնիկ կամ նախկինում առկա հիվանդությունների հետևանք են, թե ոչ: Միաժամանակ, քրոնիկ հիվանդությունների դեպքում հայտնի չէ, թե զինծառայողների առողջական խնդիրների բուժման ընթացքը ինչպես է հսկվել պետության, մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից, և արդյոք զինծառայողները բուժման նպատակով որևէ աջակցություն ստացել են պետության կողմից, թե ոչ:

Ամփոփելով վերը նշված տեղեկությունները՝ փաստենք, որ շարունակում են մտահոգիչ մնալ զինծառայողների խորացված եւ հսկիչ կամ կանխարգելիչ բուժզննությունը պատշաճ կազմակերպման վիճակը, որի հետևանքով արձանագրվում են մահվան դեպքեր:

Զինծառայողների մահվան դեպքերի պատճառներն ըստ զինծառայության տեսակի կամ զինծառայողի կարգավիճակի

Դիտարկելով զինված ուժերում մահվան դեպքերը ըստ պատճառների և մահացած զինծառայողների ծառայության տեսակի՝ արձանագրում ենք, որ.

ժամկետային զինծառայողների շրջանում մահացության պատճառներն են

- **սպանությունը** (9 դեպք),

- **ինքնասպանությունը** (6 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտում** (6 դեպք),
- **առողջական խնդիրները** (1 դեպք),
- **ավտովթարը** (1 դեպք):

պայմանագրային զինծառայողների մահացության պատճառներն են

- **ավտովթարը** (11 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումը** (9 դեպք),
- **առողջական խնդիրները** (8 դեպք),
- **դժբախտ պատահարները** (4 դեպք),
- **ինքնասպանությունը** (2 դեպք):

պահեստազորայինների մահացության պատճառն է

- **հրադադարի ռեժիմի խախտում** (1 դեպք),
- **դժբախտ պատահարը** (1 դեպք),
- **սպանություն** / մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում **(պահեստազորի սպա)** (1 դեպք)
- **սպանությունը՝ մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում** (1 դեպք):

սպաների մահացության պատճառն է

- **առողջական խնդիրները** (6 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտումը** (2 դեպք),
- **ինքնասպանություն** (1 դեպք),
- **ավտովթար** (2 դեպք):

ենթասպաների մահացության պատճառն է

- **առողջական խնդիրները** (2 դեպք),
- **հրադադարի ռեժիմի խախտում** (1 դեպք),
- **ավտովթար** (1 դեպք):

Այսպիսով, 2021 թ. **առողջական խնդիրների** հետևանքով մահացության դեպքեր արձանագրվել են բոլոր տեսակի զինծառայողների շրջանում, բացի պահեստազորայիններից, **ավտովթարի** հետևանքով մահացության դեպքեր

արձանագրվել են **պարտադիր ժամկետային, պայմանագրային զինծառայողների, սպաների, ենթասպաների շրջանում** *(տե՛ս գծապատկեր 3)*:

Եթե գնահատենք սպանության և ինքնասպանության դեպքերի տարածվածությունը, ապա կնկատենք, որ դրանք առավելապես տարածված են ժամկետային զինծառայողների շրջանում (սպանություն՝ 9 դեպք, ինքնասպանություն՝ 6 դեպք), իսկ առողջական խնդիրների և ավտովթարի հետևանքով մահվան դեպքեր գրանցվել են հիմնականում պայմանագրային զինծառայողների շրջանում՝ համապատասխանաբար 8 և 11 դեպք, սպաների շրջանում՝ համապատասխանաբար 6 և 2 դեպք, ենթասպաների շրջանում՝ համապատասխանաբար 2 և 1 դեպք:

Գծապատկեր 3. 2021 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների ծառայության տեսակն ըստ մահվան պատճառների



Մահացության **76** դեպքերից 62-ը տեղի է ունեցել **ՀՀ** տարածքում, 14-ը՝ **ԱՀ/ԼՂ** տարածքում (տե՛ս գծապատկեր 4):

Գծապատկեր 4. 2021 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում մահացած զինծառայողների թիվն ըստ մահվան դեպքերի տարածքների



Զինվորական ծառայության հետ կապված և չկապված դասակարգված մահացության դեպքեր

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրվել է 74 զինծառայողի մահվան դեպքի մասին, որոնցից **42-ը** համարվել է զինվորական **ծառայության հետ կապված, 32-ը՝ չկապված:**

Նշենք, որ Դատախազության կողմից ծառայության հետ չկապված դասակարգված մահացության 32 դեպքերից

- 11 դեպքում զինծառայողները վթարի են ենթարկվել քաղաքացիական/անձնական մեքենայով (ընդ որում՝ նրանցից 1-ը գտնվել է ազատ հերթափոխում),
- 11 դեպքում (6-ը առողջական խնդիրների հետևանքով, 3-ը՝ ինքնասպանության, 2-ը՝ դժբախտ պատահարի) զինծառայողները գտնվել են տանը կամ ազատ հերթափոխում,
- 7 դեպքում (առողջական խնդիրներ) զինծառայողների մահն արձանագրվել է բժշկական կենտրոններում, սակայն Դատախազության կողմից դեպքի մանրամասները չեն տեղեկացվել,

- 1 դեպքում (առողջական խնդիրներ) զինծառայողների մահն արձանագրվել է բժշկական կենտրոն տեղափոխվելու ճանապարհին՝ շտապօգնության մեքենայում,
- 1 դեպքում (ինքնասպանության), չնայած զինծառայողը հայտնաբերվել է զորամասերի մշտական տեղակայման վայրից 2.5 կմ հեռավորության վրա, Դատախազությունը տեղեկացրել է, որ քննությամբ ձեռք չեն բերվել դեպքի՝ ծառայության հետ կապված լինելու վերաբերյալ տվյալներ։
- 1 դեպքում (առողջական խնդիրներ) զինծառայողի մահվան դեպքի մասնրամասների մասին չեն հայտնել:

Հավելենք, որ Կազմակերպությանը հայտնի է զինվորական ծառայության հետ կապված և չկապված մահվան մեկական դեպքերի մասին, որոնց մասին չի տեղեկացրել ՀՀ գլխավոր դատախազությունը՝ ի պատասխան Կազմակերպության գրավոր հարցման։ Այսպես, ՀՀ գլխավոր ատախազության կողմից չտեղեկացված երկու դեպքերից մեկը, որը դասակարգվել է որպես զինծառայության հետ չկապված, արձանագրվել է դժբախտ պատահարի՝ մեքենայի դետալը գլխին հարվածելու հետրանքով, ինչի արդյունքում մահացել է պահեստազորի սպա, որն, ըստ Կազմակերպությանը մեկ այլ պաշտոնական աղբյուրի կողմից հայտնած տվյալի, գտնվել է ծառայության մեջ։

Եվս մեկ դեպք, որի մասին ՀՀ գլխավոր դատախազությունը չի հայտնել, կապված է զինվորական ծառայության հետ։ Դեպքի պատճառը սպանությունն է՝ մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում։

ՀՀ քննչական կոմիտեի (ՔԿ) կողմից Կազմակերպությանը տրամադրվել են միայն այն **42** զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ տեղեկությունները, որոնց կապակցությամբ ՀՀ ՔԿ զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումներում իրականացվում է մինչդատական վարույթ։

Ի դեպ, ՀՀ ՔԿ կողմից Կազմակերպությանը տրամադրված տվյալներով՝ 42 զինծառայողներից 39-ի մահվան դեպքերը համարվել են զինվորական ծառայության հետ կապված, 3 դեպք՝ չկապված։ Զինվորական ծառայության հետ չկապված են համարվել ինքնասպանության հետևանքով 2 և սպանության հետևանքով 1 զինծառայողի մահվան դեպքերը։

Բացի այդ, ՀՀ ՔԿ-ն Կազմակերպությանը չի տրամադրել 2021 թ. հուլիս - դեկտեմբեր ամիսներին մահացած զինծառայողների անունները, այլ տրամադրել է միայն թվային տվյալ՝ ըստ ծառայության հետ կապված և չկապված դասակարգված դեպքերի, ըստ ընդհանուր մահվան պատճառների և հարուցված քրեական գործերի, մինչդեռ Կազմակերպության կողմից գրավոր հարցմամբ՝ նշված տեղեկությունները պահանջվել էր զինծառայողների անվանական տվյալների հետ միասյն:

Փաստացի, ՀՀ ՔԿ կողմից չի տրամադրվել մանրամասն տեղեկություն՝ ըստ յուրաքանչյուր զինծառայողի մահվան դեպքի՝ անդրադառնալով հարցմամբ պահանջվող տեղեկատվության միայն մի մասին:

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցումներին ի պատասխան հայտնել է միայն 2021 թ. հուլիս-դեկտեմբեր ամիսներին մահացած զինծառայողների թիվը: Նշենք, որ 2021 թ. առաջին կիսամյակում զինծառայողների մահվան դեպքերի վերաբերյալ Կազմակերպության հարցման պատասխանը ՀՀ ՊՆ կողմից ամբողջությամբ մերժվել է՝ հիմք ընդունելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետի պահանջները՝ համարելով, որ տեղեկատվությունը «...պարունակում է պետական, ծառայողական... գաղտնիք»:

Ըստ ՀՀ ՊՆ տվյալների՝ 2021 թ. երկրորդ կիսամյակում՝ հուլիս-դեկտեմբեր ամիսներին մահացել է 45 զինծառայող, որոնցից 27-ը, ըստ ՀՀ ՊՆ նախնական տեղեկատվության, մահացել են զինվորական ծառայության անցնելու հետ կապված հանգամանքներում, 18-ը՝ չկապված: Մահվան դեպքերից 37-ն արձանագրվել է ՀՀ տարածքում, 8-ը՝ ԱՀ/ԼՂ: ՀՀ ՊՆ կողմից, այնուամենայնիվ, չեն տրամադրվել զինծառայողների անուններն ու մահվան պատճառները՝ հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները՝ «...եթե խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը...» և «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջները:

Հատկանշական է, որ ՀՀ ՊՆ կողմից նույնատեսակ տեղեկատվության տրամադրման մերժումը յուրաքանչյուր անգամ հիմնավորվում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի տարբեր կետերով:

Բացի այդ, ՀՀ ՊՆ-ն շարունակում է ոչ միանշանակ վարքագիծ դրսևորել նմանատիպ բովանդակությամբ հարցումներով պահանջվող տեղեկությունների տրամադրման հարցում՝ երբեմն ամբողջությամբ տրամադրելով հայցվող տեղեկատվությունը, երբեմն՝ տրամադրելով այն թերի, երբեմն՝ մերժելով և այն գաղտնի համարելով:

Ի դեպ, 2021 թվականին Կազմակերպությունը հրապարակել է տեղեկանք[6] «ՀՀ պաշտպանության նախարարության վարքագիծը տեղեկությունների տրամադրման հարցում», որտեղ առավել մանրամասն անդրադարձել ենք պաշտպանական գերատեսչության կողմից տեղեկությունների տրամադրման եւ գաղտնիության բարձր մակարդակի հարցին:

2021 թ. զինծառայողների մահվան փաստերով հարուցված քրեական գործերի բաշխումն ըստ ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների

Ըստ Կազմակերպությանը հայտնի դարձած պաշտոնական և զանգվածային լրատվամիջոցներով տարածված տվյալների՝ 2021 թ. ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում 76 զինծառայողները մահացել են 66 միջադեպի արդյունքում, որոնցից

35-ով (45 զինծառայողի մահվան փաստով) հարուցվել են քրեական գործեր հետևյալ հոդվածներով.

- **4-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը առաջացրել է ծանր հետևանքներ,
- **3-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մասով՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը,
- **3-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ և 13-րդ կետերով՝ սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,

[6] https://hcav.am/pn-gaghtniutyun/

ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,

- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն,
- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետերով՝ սպանությունը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ,
- **2-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ,
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ և ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ,
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում,
- **1-ը**՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար

նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը

- **1-ը՝ (3 զինծառայողի մահվան փաստով)** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ սպանությունը՝ երկու կամ ավելի անձանց,
- **1-ը՝ (3 զինծառայողի մահվան փաստով)** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն, ՀՀ քրեական օրենսգրքի 300.2 հոդվածով՝ տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունները,
- **1-ը՝ (2 զինծառայողի մահվան փաստով)** ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ, և ՀՀ քրեական օրենսգրքի 244 հոդվածի 1-ին մասով՝ ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգիքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերով՝ սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,
- **1-ը՝** ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 6-րդ, 13-րդ կետերով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական

մոլեռանդության շարժառիթով անձի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,

- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ և 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ակնհայտ հղի կնոջ սպանություն, ապօրինի կերպով զենք պահելը (զինծառայողի մահվան պատճառը՝ ինքնասպանություն),
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում, և ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ ապօրինի կերպով հրազեն, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-ին մասի 3-րդ կետ՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մի խումբ անձանց կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում), 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ մասով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը մի խումբ անձանց կողմից, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ապանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,
- 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով՝ սպանությունը երկու կամ ավելի անձանց՝ մի խումբ անձանց կամ

կազմակերպված խմբի կողմից, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,

- **1-ը (2 զինծառայողի մահվան փաստով)՝** ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով։

- Հարուցված 35 (45 զինծառայողի մահվան փաստով) քրեական գործերից
  - 29-ը գտնվում են **նախաքննության** փուլում,
  - 3-ի քննությունը **կասեցվել** է՝ անհաղթահարելի ուժ գործելու հիմքով,
  - 2-ի քննությունը **կարճվել** է՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով,
  - 1 քրեական գործով (վրաերթի հետևանքով 2 զինծառայողի մահվան փաստով հարուցված) դատարանի կողմից կայացվել է որոշում որպես մեղադրյալ ներգրավված անձի երկամսյա կալանքի մասին։ Գործը դատաքննության փուլում է

- **Մյուս 31 միջադեպերի արդյունքում մահացած 31 զինծառայողների մահվան դեպքերով քրեական գործ կամ չի հարուցվել կամ հայտնի չէ քրեական գործի հարուցման մասին.**

❖ 3 դեպքով (1-ը՝ առողջական խնդիրների, 1-ը՝ դժբախտ պատահարի, 1-ը՝ ավտովթարի հետևանքով) քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով (հանցագործության դեպքի բացակայության հիմքով) և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-ին կետով (արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով)։

❖ 25 դեպքով (13-ը առողջական խնդիրների, 10-ը՝ ավտովթարի, 2-ը՝ դժբախտ պատահարի՝ ծառի տապալման հետևանքով դեպքեր), ըստ Դատախազության,

վարույթներն իրականացվել են տարբեր այլ՝ ոչ զինվորական քննչական վարչությունների և ոստիկանության տարբեր բաժինների կողմից։

- 2 գործով (առողջական խնդիրների հետևանքով) քրեական գործ չի հարուցվել,
- 1 գործով (ինքնասպանության հետևանքով) հայտնի չէ արդյոք հարուցվել է քրեական գործ թե ոչ։

Աղյուսակ 1-ում ներկայացվում է 2021 թ-ին զինված ուժերում մահացության դեպքերի ամփոփ տեղեկատվությունը:

Աղյուսակ 1. 2021 թ մահացության դեպքերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն

Հ/Հ	Անուն Ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարածա-շրջան	Տեղ. տարածման առաջնային աղբյուրը/ հետագայում հաստատող անձը, կառույցը	Քր. գործ հարուցող մարմինը	ՀՀ քր. օրենսգրքի հոդվածը	Քր. գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1.	Վրեժ Գրիգորյան	10.01.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարատի քննչական վարչության Վեդիի բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար/ սեփական մեքենայով	Հայտնի չէ
2.	Ռաֆիկ Թաթոսյան	12.01.2021	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս, ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ	Առողջական	Նախաքննություն
3.	Սերգեյ Շահնազարյան	15.01.2021	ՀՀ	ԶԼՄ	Վարույթն իրականացվել է Սևանի կայազորային քննչական բաժնի կողմից	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մաս	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ	Դժբախտ պատահար / կայծակնահարում	Կարճվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով
4.	Էդիկ Չատյան	15.01.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից	Հայտնի չէ	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից	Դժբախտ պատահար / ծառը ընկել է վրան	Հայտնի չէ

5.	Լևոն Եղիազարյան	03.11.2020 վիրավորում (15.01.2021 մահ)	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետեր	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
6.	Արսեն Մայիլյան	16.01.2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ Մարտունու շրջանի ոստիկանության կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար/ սեփական մեքենայով	Հայտնի չէ
7.	Մասիս Բալասանյան	20.01.2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ քննչական կոմիտեի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար/ սեփական մեքենայով	Հայտնի չէ
8.	Հրաչ Նազարյան	02.10.2020 վիրավորում (03.02.2021 մահ)	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետեր	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
9.	Էդվարդ/ Էդուարդ Կիրակոսյան	08.02.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով	Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով	Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով	Առողջական/ Հանկարծամահ	Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով
10.	Գեղամ Գրիգորյան	13.03.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երեբունու բաժնի կողմից	Վարույթն Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
11.	Արսեն Մարգարյան	21.03.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երեբունու բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
12.	Աղասի Հովհաննիսյան	23.03.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Եղեգնաձորի կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ	Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն	Դժբախտ պատահար /	Կարճվել է՝ ՀՀ քրեական

						մաս	անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ (ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կատարված)	ձնահյուս	դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով
13.	Լևոն Մկրտումյան	15.04.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Աբովյանի քննչական բաժնի կողմից	ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մաս, ՀՀ քրեական օրենսգրքի 244 հոդվածի 1-ին մաս	1. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ 2. Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը	Ավտովթար/ վրաերթ	Կայացվել է դատավճիռ՝ երկամյա կալանք
14.	Արամ Բաղալյան	15.04.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Աբովյանի քննչական բաժնի կողմից	ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մաս, ՀՀ քրեական օրենսգրքի 244 հոդվածի 1-ին մաս	1. Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ 2. Ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը	Ավտովթար/ վրաերթ	Կայացվել է դատավճիռ՝ երկամյա կալանք
15.	Նարեկ Խաչատրյան	20.04.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մաս	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
16.	Արտյոմ Մելքոնյան	04.05.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն/ ԶՕԿ (զենքի օգտագործման կանոններ)	Նախաքննություն

17.	Կարապետ Սարգսյան	10.05.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Նոր նորքի բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
18.	Ռոման Բաղդատյան	14.05.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մաս	Սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանություն տանը	Նախաքննություն
19.	Տիգրան Բաբայան	15.05.2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ ոստիկանության քննչական վարչության կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
20.	Արման Համբարյան	20.05.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազություն	ՀՀ քրեական օրոնսգիքի 377-րդ հոդվածի 2-րդ մաս	Մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Ավտովթար	Նախաքննություն
21.	Հովհաննես Մխիթարյան	21.05.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար/ սեփական մեքենայով	Հայտնի չէ
22.	Մկրտիչ Հովհաննիսյան	24.05.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	8-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մաս	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
23.	Գևորգ Խուրշուդյան	25.05.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,	Հրադադարի ռեժիմի խախտում	Կասեցվել է անհաղթահարելի ուժ գործելու հիմքով
24.	Մհեր Հովհանիսյան	25.05.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մաս	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը	Ինքնասպանություն	Նախաքննություն
25.	Աշոտ Սարդարյան	28.05.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել		Քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով	Քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով	Դժբախտ պատահար/ մեքենան նորոգելիս դետալը հարվածել է գլխին	Քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության

									հիմքով
26.	Եղիշե Մանուկյան	28.05.2021	ԱՀ/ԼՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ քննչական կոմիտեի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար/ սեփական մեքենայով	Հայտնի չէ
27.	Վահագն Սահակյան	15.06.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ արարատի մարզային քննչական վարչության կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ավտովթար/ սեփական մեքենայով	Հայտնի չէ
28.	Արթուր Գրիգորյան	26.06.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տավուշի բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական/ Հանկարծամահ	Հայտնի չէ
29.	Ասատուր Մելքոնյան	28.06.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական/ ինֆարկտ տանը	Հայտնի չէ
30.	Գրիգոր Հարությունյան	10/07/2021	ՀՀ	ԶԼՄ	8-րդ կայազորային քննչական վարչություն	ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մաս	Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Ավտովթար ՊՆ մեքենայով	Նախաքննություն
31.	Սամվել Ալավերդյան	14/07/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րս մասի 2-րդ, 6-րդ, 13-րդ կետեր	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով անձի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	Հրադադարի ռեժիմի խախտում	Կասեցվել է՝ անհաղթահարելի ուժ գործելու հիմքով
32.	Արթուր Ղազարյան	16/07/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը ռաջացրել է ծանր հետևանքներ	Սպանություն/ Մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում	Նախաքննություն
33.	Արամ Միրզոյան	24/07/2021	ՀՀ	ԶԼՄ		Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ	Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով	Ավտովթար/ սեփական մեքենայով	Քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության

						հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով			օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով
34.	Սարգիս Գրիգորյան	26/07/2021	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-ին մասի 3-րդ կետ	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում	Ինքնասպանություն	Նախաքննություն
35.	Հայկ Գևորգյան	28/07/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետեր, ՀՀ քրեական օրենսգրքի 300.2 հոդված	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն Տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունները	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
36.	Կորյուն Հարությունյան	28/07/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետեր, ՀՀ քրեական օրենսգրքի 300.2 հոդված	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն Տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունները	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
37.	Դավիթ Քոչարյան	28/07/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետեր, ՀՀ քրեական օրենսգրքի 300.2 հոդված	Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն Տարածքային ամբողջականությունը խախտելուն ուղղված գործողությունները	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
38.	Պարգև Մարգարյան	02/08/2021	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մաս	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում Ապօրինի կերպով հրազեն,	Ինքնասպանություն	Նախաքննություն

							պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը		
39.	Գևորգ Գասպարյան	07/08/2021	ՀՀ	ՀՀ ՔԿ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ և 235-րդ հոդվածի 1-ին մաս	Ակնհայտ հղի կնոջ սպանություն, ապօրինի կերպով զենք պահելը	Սպանություն/ Ապօրինի կերպով զենք կրելը	Նախաքննություն
40.	Վահան Թաթոսյան	16/08/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ	Հրադադարի ռեժիմի խախտում	Կասեցվել է՝ անհաղթահարելի ուժ գործելու հիմքով
41.	Արման Հակոբյան	16/08/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	5-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
42.	Մուրադ Մուրադյան	19/08/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	Սպանությունը՝ երկու կամ ավելի անձանց	Սպանություն՝ երկու կամ ավելի անձանց	Նախաքննություն
43.	Լևոն Հարությունյան	19/08/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	Սպանությունը՝ երկու կամ ավելի անձանց	Սպանություն՝ երկու կամ ավելի անձանց	Նախաքննություն
44.	Գոռ Սահակյան	19/08/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	3-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ	Սպանությունը՝ երկու կամ ավելի անձանց	Սպանություն՝ երկու կամ ավելի անձանց	Նախաքննություն
45.	Էդգար Ուռուսյան	20/08/2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Քրեական գործ չի հարուցվել	Քրեական գործ չի հարուցվել	Քրեական գործ չի հարուցվել	Առողջական	Քրեական գործ չի հարուցվել
46.	Գեղամ Սահակյան	01/09/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	8-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական	Հրադադարի ռեժիմի խախտում	Կասեցվել է՝ անհաղթահարելի ուժ գործելու հիմքով

							գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ		
47.	Վլադիմիր Պետրոսյան	09/09/2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ Ստեփանակերտի քաղաքային ոստիկանության վարչության կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
48.	Աշոտ Ղարիբյան	11/09/2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Սիսիանի բաժնի կողմից	Հայտնի չէ	Հայտնի չէ	Դժբախտ պատահար/ հանկարծամահ	Հայտնի չէ
49.	Մկրտիչ Հովակիմյան/ Հովակյան	13/09/2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	9-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը ռաջացրել է ծանր հետևանքներ	Սպանություն/ Մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում	Նախաքննություն
50.	Լևոն Սուքիասյան	13.09.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել		ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը ռաջացրել է ծանր հետևանքներ	Սպանություն/ Մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում	Նախաքննություն
51.	Մակիչ Իգնաթևոսյան	14/09/2021	ՀՀ	ԶԼՄ/ հետագայում պաշտոնական	Հայտնի չէ	Հայտնի չէ	Հայտնի չէ	Ինքնասպանություն	Հայտնի չէ
52.	Մարգարիտա Թադևոսյան	19/09/2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ տարաածքային քննչական վարչության կողմից	Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ տարաածքային քննչական վարչության կողմից	Հայտնի չէ	Ավտովթար/ քաղաքացիական մեքենայի ուղևոր	Հայտնի չէ
53.	Արարատ Տեր-Թարխանյան	29/09/2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Քրեական գործ չի հարուցվել	Քրեական գործ չի հարուցվել	Քրեական գործ չի հարուցվել	Առողջական	Քրեական գործ չի հարուցվել
54.	Մինաս Մուրադյան	08.10.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
55.	Մարիամ Մելիքյան	09.10.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի կողմից	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
56.	Սուրեն Աղաջանյան	13.10.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի կողմից	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
57.	Վարշամ Թադևոսյան	23.10.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ	Վարույթն իրականացվել է ՀՀ	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ

					ոստիկանությունՄալաթիայի բաժնի կողմից	ոստիկանությունՄալաթիայի բաժնի կողմից			
58.	Գրիգոր Վարդանյան	07.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը ռաջացրել է ծանր հետևանքներ	Սպանություն/ Մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում	Նախաքննություն
59.	Դավիթ Հակոբյան	10.11.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային վարչության Գորիսի քննրական բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային վարչության Գորիսի քննրական բաժնի կողմից	Հայտնի չէ	Ավտովթար/ քաղաքացիական մեքենա	Հայտնի չէ
60.	Լևոն Հովսեփյան	11.11.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության ԳՄՎ ոստիկանության Մարտունու բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության ԳՄՎ ոստիկանության Մարտունու բաժնի կողմից	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
61.	Տարոն Սահակյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
62.	Մերուժան Հարությունյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
63.	Գուրգեն Սարգսյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն

							շարժառիթով		
64.	Արթուր Մարտիրոսյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
65.	Դավիթ Ամիրյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
66.	Արսեն Գասպարյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ մարտական գործողություններ	Նախաքննություն
67.	Գևորգ Ավետյան	16.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետեր, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ մաս, ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մաս	Զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մի խումբ անձանց կողմից մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում Զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը մի խումբ անձանց կողմից, Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ	Ինքնասպանություն	Նախաքննություն

68.	Սուրիկ / Սուրեն Սաֆարյան	22.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ		ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
69.	Սուրեն Ավետիսյան	24.11.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	6-րդ կայազորային քննչական բաժին	ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մաս	Զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն/ ԶՕԿ	Նախաքննություն
70.	Կարեն Գաբոյան	03.12.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզի Թումնայանի քննչական բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզի Թումնայանի քննչական բաժնի կողմից	Հայտնի չէ	Ավտովթար/ քաղաքացիական մեքենա	Հայտնի չէ
71.	Գոռ Մարտիրոսյան	05.12.2021	ԱՀ/ԼՂ	ԱՀ/ԼՂ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, անձի՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
72.	Վահե Մանասերյան	10.12.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետեր	Սպանությունը երկու կամ ավելի անձանց՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,, կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կատարման հետ, շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով,	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
73.	Սենիկ Արզումանյան	10.12.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ	Երկու կամ ավելի անձանց սպանություն՝ շատերի կյանքի	Սպանություն/ Երկու կամ ավելի	Նախաքննություն

						մասի 1-ին և 6-րդ կետեր	համար վտանգավոր եղանակով	անձանց՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով	
74.	Երեմ Աբրահամյան	27.12.2021	ԱՀ/ԷՂ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ կողմից	Ավտովար/ քաղաքացիական	Հայտնի չէ	Ավտովար/ քաղաքացիական	Հայտնի չէ
75.	Անահիտ Զրվանդյան	13.12.2021	ՀՀ	Տեղեկատվություն չի տարածվել	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից	Վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից	Հայտնի չէ	Առողջական	Հայտնի չէ
76.	Մովսես Թադևոսյան	31.12.2021	ՀՀ	ՀՀ ՊՆ	Հայտնի չէ	ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մաս	Սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն/ Դիտավորյալ	Նախաքննություն

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀՐԱԴԱԴԱՐԻ ՌԵԺԻՄԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ. ԻՐԱՎՐՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԻՆ

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակին ՀՀ պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկատվության՝ 2021 թ. ընթացքում հայ-ադրբեջանական շփման գծում Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմը խախտվել է 2450 անգամ, իսկ ղարաբաղաադրբեջանական շփման գծում 73-ով քիչ՝ 2377 անգամ *(տե՛ս աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2. 2021 թ հայ-ադրբեջանական և ղարաբաղաադրբեջանական սահմանին հրադադարի ռեժիմի խախտման քանակն ըստ ամիսների

Ամիս	Հայ-ադրբեջանական շփման գիծ	Ղարաբաղաադրբեջանական շփման գիծ	Ընդամենը
Հունվար	44	120	**164**
Փետրվար	64	120	**184**
Մարտ	86	147	**233**
Ապրիլ	83	171	**254**
Մայիս	73	175	**248**
Հունիս	51	217	**268**
Հուլիս	222	232	**454**
Օգոստոս	443	219	**662**
Սեպտեմբեր	296	276	**572**
Հոկտեմբեր	431	174	**605**
Նոյեմբեր	405	235	**640**
Դեկտեմբեր	252	291	**543**
Ընդամենը	**2450**	**2377**	**4827**

Հարկ է նշել, որ «ՀՀ ՔՈՒ կարգապահական կանոնագրքի»[7] 27-րդ հոդվածում 2019 թ. դեկտեմբերի 12-ի կատարված փոփոխության համաձայն՝ «Զինծառայողի նկատմամբ նշանակված ծառայողական քննությունը կասեցվում է … ծառայողական քննության կատարմանը ժամանակավորապես խոչընդոտող այլ անհաղթահարելի ուժ առաջացած լինելու դեպքերում»: ՀՀ ՊՆ կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ «հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով զոհվելու դեպքերի առնչությամբ ծառայողական քննություն չի իրականացվում, այլ ՔԿ զինվորական քննչական գլխավորն վարչության կայազորային բաժիններում հարուցվում է քրեական գործ և կատարվում է նախաքննություն»:

[7] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=137949

Անդրադառնալով 2021 թ. հայ-ադրբեջանական և ղարաբաղա-ադրբեջանական սահմանային իրավիճակին՝ նշենք, որ այդ մասին ՀՀ ՊՆ կողմից տարածվել են մամուլի հաղորդագրություններ: Մասնավորապես՝ **2021 թ. հունվար - մարտ** ամիսների ընթացքում ՀՀ ՊՆ կողմից պարբերաբեր տեղեկացվել է, որ «շփման գծի ամբողջ երկայնքով սահմանային միջադեպեր չեն արձանագրվել, օպերատիվ մարտավարական իրավիճակը փոփոխության չի ենթարկվել»: Կազմակերպության հարցմանն ի պատասխան ստացված ՀՀ ՊՆ գրությամբ տեղեկացրել են, որ **2021 թ. հունվար-մարտ** ամիսներին հրադադարի ռեժիմի խախտումների թիվը հայ-ադրբեջանական շփման գծում տատանվել է 40-ից 90 խախտումներիր միջակայքում, մասնավորապես՝ հունվար, փետրվար, մարտ ամիսներին արձանագրվել են խախտում 44, 64 86 անգամ համապատասխանաբար: Մինչդեռ, նույն ժամանակահատվածում ղարաբաղաադրբեջանական շփման գծում այդ թիվը տատանվել է 120-ից 150-ի միջև՝ 120, 120, 147 համապատասխանաբար:

2021 թ. **ապրիլին** հայ-ադրբեջանական շփման գծում վիճակը չի փոխվել. արձանագրվել է հրադադարի ռեժիմի խախտում 83 անգամ: Սակայն ղարաբաղաադրբեջանական շփման գծում խատումների թիվը աճել է՝ հասնելով 171-ի: Ադրբեջանական կողմը նաև կրակոցներ է արձակել Ստեփանակերտում գտնվող բնակելի տան վրա: Տան տանիքը վնասվել է[8]: Կրակոցներ են եղել նաև Արցախի Մխիթարաշեն և Շոշ գյուղերի ուղղությամբ:

2021 թ. **մայիսի** 12-ից սկսած իրավիճակը սրվել է հայ-ադրբեջանական սահմանին, երբ վաղ առավոտյան ադրբեջանական զինուժը, ըստ ՀՀ ՊՆ տվյալի՝ «սահմանների ճշգրտման» հիմնավորմամբ, փորձել է որոշակի աշխատանքներ իրականացնել Սյունիքի սահմանային հատվածներից մեկում: Հայկական կողմի ձեռնարկած միջոցառումներից հետո վերջիններս դադարեցրել են այդ աշխատանքները, և սկսվել են բանակցություններ՝ ստեղծված իրավիճակը հարթելու ուղղությամբ[9]:

Այնուամենայնիվ, 2021 թ. մայիսի 13-ին ադրբեջանական զինված ուժերը, կրկին՝ «սահմանների ճշգրտման» հիմնավորմամբ փորձել է դիրքային առաջխաղացում ապահովել Վարդենիսի և Սիսիանի սահմանային հատվածներում: Ըստ ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության՝ ՀՀ զինված ուժերի գործողությունների արդյունքում առաջխաղացումը

[8] https://factor.am/361802.html?fbclid=IwAR0K8HDwew9jbjJZexUvoQB_7jTKu_tWUi6v3EJIokffUDfa6g58oehohtU, https://nkrmil.am/news/view/3228
[9] https://mil.am/hy/news/9390

կասեցվել է, ադրբեջանական կողմին պահանջ է ներկայացվել տարածքը լքելու վերաբերյալ: Եվ չնայած այդ հանգամանքին, ադրբեջանական զինված ուժերի մի մասը շարունակում է գտնվել Հայաստանի Հանրապետության տարածքում[10]:

Քննարկումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել բանակցությունները[11]: Եռօրյա բանակցությունների արդյունքում մայիսի 19-ի համար ձեռք բերված հանդիպման մասին պայմանավորվածությունը խախտվել է Ադրբեջանի կողմից, երբ համապատասխան անձինք չեն ներկայացել բանակցությունների[12]:

2021 թ. մայիսի 20-ին ադրբեջանցի զինծառայողները մի քանի տասնյակ կրակոց են արձակել օդ, ինչից հետո հայկական ստորաբաժանումները նախազգուշացնող կրակ են բացել[13]: Նույն օրը երեկոյան Սև լճի մերձակայքում տեղի է ունեցել վիճաբանություն հայ և ադրբեջանցի զինվորականների մասնակցությամբ[14]:

Մայիսի 25-ին միջադեպեր են գրանցվել Գեղարքունիքի մարզի Վերին Շորժայի սահմանային հատվածում. ադրբեջանական կողմը հայ դիրքապահների ուղղությամբ կրակահերթեր է արձակել[15]: Նույն օրը կրակոցներ են արձակվել նաև Սիսիանի հատվածում:

Ըստ ՀՀ ՊՆ տվյալի՝ մայիսին հայ-ադրբեջանական շփման գծում հրադադարի ռժիմը խախտվել է 73 անգամ, իսկ ղարաբաղաադրբեջանական շփման գծում՝ 175 անգամ:

2021 թ. մայիսի 12-ին **վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանն** անդրադառնալով հայ-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցածին՝ Անվտանգության խորհրդի արտահերթ նիստում հայտարարել է, որ տեղի ունեցածն «իր բնույթով դիվերսիոն անցում է», ինչն «անընդունելի է»[16]:

Ինչ վերաբերում է **ՀԱՊԿ անդամ երկրների** արձագանքին, ապա հարկ է նշել, որ սահմանին իրադրության սրման միայն հաջորդ օրը՝ 2021 թ. մայիսի 13-ին, ՀԱՊԿ կայքէջում տարածվեց հաղորդագրություն, որում մասնավորապես նշվում էր, որ «***հայկական կողմի կարծիքով Ադրբեջանի զինված ուժերը խախտել են սահմանը և խորացել հայկական տարածքում մի քանի կիլոմետր»:*** Հավելվել է, որ ***«ՀԱՊԿ-ը ուշադիր հետևում է***

[10] https://mil.am/hy/news/9407
[11] https://mil.am/hy/news/9408
[12] https://mil.am/hy/news/9429
[13] https://mil.am/hy/news/9441
[14] https://mil.am/hy/news/9445
[15] https://mil.am/hy/news/9461
[16] https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/05/12/Nikol-Pashinyan-Security-Council-meeting/

Սյունիքի սահմանային շրջաններում իրավիճակի զարգացմանը: Անհրաժեշտության դեպքում կձեռնարկվեն ՀԱՊԿ համաձայնագրով նախատեսված համապատասխան միջոցներ»[17]:

Ռուսաստանի Դաշնության արտաքին գործերի նախարար Սերգեյ Լավրովը 2021թ. մայիսի 17-ին հայտարարել է, որ Ռուսաստանը զգացմունքների սրման համար հիմքեր չի տեսնում հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակի պատճառով: Նա հավելել է, որ Մոսկվան պատրաստ է օժանդակել Երևանին և Բաքվին սահմանազատման հարցում[18]:

Ռուսաստանի նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը 2021 թ. մայիսի 17-ին հայտարարել է, որ Ռուսաստանը մշտական կապի մեջ է Բաքվի և Երևանի հետ, և որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը կողմ է, որ եռակողմ պայմանավորվածությունները կատարվեն առանց այլընտրանքի[19]:

Հայ-ադրբեջանական սահմանային իրավիճակին արձագանքել է **Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը**, մասնավորապես հրապարակում կատարելով իր ֆեյսբուքյան էջում կոչ անելով Ադրբեջանի զինված ուժերին անհապաղ հետ քաշվել[20]:

Նիկոլ Փաշինյանի հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում Մակրոնն առաջարկել է հայ-ադրբեջանական սահմանային լարվածության հարցը տեղափոխել ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդ՝ առաջարկելով ընդհուպ մինչև ռազմական աջակցություն Հայաստանին[21]:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ **ԱՄՆ նախագահի ազգային անվտանգության հարցերով խորհրդական** Ջեյք Սալիվանի նախաձեռնությամբ տեղի ունեցած հեռախոսազրույցի[22] ընթացքում վերջինս ընդգծել է, որ ամերիկյան կողմն *«անընդունելի և սադրիչ է համարում Հայաստանի սահմանից ներս ադրբեջանական ուժերի իրականացրած գործողությունները»*: Սալիվանը նաև տեղեկացրել է, որ ԱՄՆ դիրքորոշումը ներկայացվելու է նաև ադրբեջանական ղեկավարությանը՝ իրենց ուժերը ՀՀ տարածքից դուրս բերելու պահանջով:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հեռախոսազրույցից հետո Սալիվանը կապ է հաստատել նաև Ադրբեջանի նախագահ Ալիևի հետ, որի ընթացքում *«սադրիչ ու*

---

[17] https://odkb-csto.org/news/news_odkb/kommentariy-odkb-v-svyazi-s-situatsiey-v-zone-armyano-azerbaydzhanskoy-granitsy-v-syunikskoy-oblasti/
[18] https://ria.ru/20210517/granitsa-1732644302.html
[19] https://armeniasputnik.am/russia/20210517/27573420/rd-n-mshtakan-kapi-mej-e-hayastani-u-adrbejani-het.html
[20] https://www.facebook.com/EmmanuelMacron/posts/3139503412948890
[21] https://www.elysee.fr/emmanuel-macron/2021/05/13/communique-situation-armenie, https://www.youtube.com/watch?v=dGI2xeARoJ0
[22] https://www.primeminister.am/hy/press-release/item/2021/05/17/Nikol-Pashinyan-Telephone-Conversation-17-05/

անպատասխանատու» է որակել չսահմանազատված սահմանի երկայնքով զինվորականների տեղաշարժը:

Եվրամիության արտաքին գործերի և անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Ժոզեֆ Բորելը հայտարարություն է տարածել հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակի մասին, մասնավորապես նշելով, որ Եվրամիությունը ուշադիր հետևում է սահմանի երկայնքով մտահոգիչ զարգացումներին: Վերջինս զրույց է ունեցել Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ՝ երկու կողմերին կոչ անելով առավելագույն զսպվածություն ցուցաբերել: Նա հավելել է, որ սահմանազատման և սահմանագծման գործընթացը պետք է կարգավորվի բանակցությունների միջոցով՝ ելնելով տեղի բնակչության անվտանգությունից[23]:

Բացի նշված միջադեպերից, 2021 թ-ին գրանցվել են նաև զինծառայողների և քաղաքացիական անձանց կողմից տեղանքում չկողմնորոշվելու և մոլորվելու պատճառով Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածքներ անցնելու դեպքեր:

Այսպես, 2021 թ. մայիսի 27-ին վաղ առավոտյան Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում ՀՀ զինված ուժերի զորամասերից մեկի պահպանության տարածքում ինժեներական աշխատանքներ կատարելիս, ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների կողմից շրջափակվել և գերեվարվել է ՀՀ ԶՈՒ վեց զինծառայող: Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը պնդել է, թե Հայաստանի զինված ուժերի «հետախուզադիվերսիոն խումբ» է ձերբակալվել Քելբաջարի Յուխարի Այրըմ բնակավայրի ուղղությամբ սահմանն անցնելու փորձի ժամանակ, որն իբր փորձել է ականապատել «սահմանին տեղակայված ադրբեջանական բանակի դիրքերի մատակարարման ուղիները»[24]:

Չնայած միջազգային դատապարտող անդրադարձերին, լարվածությունը հայ-ադրբեջանական սահմանին շարունակվել է նաև **2021 թ. հունիսին**: Հրադադարի ռեժիմը խախտվել է 51 անգամ:

[23] https://eeas.europa.eu/headquarters/headquarters-homepage/98501/armeniaazerbaijan-statement-high-representative-josep-borrell-border-situation_en
[24] https://www.azatutyun.am/a/31275983.html

2021 թ. հունիսի 2-ին Մոսկվայում տեղի է ունեցել եռակողմ հանդիպում հայ-ադրբեջանական սահմանին լարվածության թուլացման ուղիների վերաբերյալ քննարկմամբ:

2021 թ. հունիսի 5-ին Գեղարքունիքի մարզի Կութ գյուղի հովվի անասունների մի մասը, գյուղի հարակից տարածքներում արածելու ընթացքում, շարժվել է դեպի ադրբեջանցի զինվորականների դիրքեր: Երբ հովիվը անասուններին հետ բերելու նպատակով փորձել է մոտենալ ադրբեջանցի զինծառայողներին, նրա ուղղությամբ կրակ է բացվել: Հայկական զինված ուժերի ստորաբաժանման զինծառայողները մոտեցել են միջադեպի տարածք, ինչին ի պատասխան ադրբեջանցի զինծառայողները կրկին կրակ են բացել: Հայկական կողմի պատասխան գործողություններից հետո կրակը դադարեցվել է: Տուժողներ չեն եղել[25]:

2021 թ. հունիսի 7-ի առավոտյան հայ-ադրբեջանական սահմանագծի՝ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի սահմանային հատվածում ադրբեջանական զինված ուժերը հերթական անգամ փորձել են ինժեներական աշխատանքներ կատարել: Հայկական ստորաժաբանումների կողմից հակազդման գործողություններ իրականացնելու արդյունքում աշխատանքները դադարեցվել են, տեխնիկան հեռացվել է[26]:

2021 թ. հունիսի 8-ին ՀՀ ԶՈՒ զորամասերից մեկի պայմանագրային զինծառայող, շարքային Ա. Քաթանյանը, մառախուղի պատճառով ապակողմնորոշվելով տեղանքում՝ հայտնվել է Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքում[27]: Քաթանյանը հունիսի 9-ի վաղ առավոտյան վերադարձվել է հայկական կողմին[28]:

Նույն ամսին՝ հունիսին սահմանային իրավիճակը սրվել է ղարաբաղաադրբեջանական շփման գծում, երբ հրադադարի ռեժիմը խախտվել է 217 անգամ:

Լարվածությունը շարունակվել և առավել սրվել է 2021 թ. **հուլիսին**, ինչպես նաև օգոստոսին, իսկ սեպտեմբերին՝ համեմատաբար թուլացել:

[25] https://mil.am/hy/news/9509
[26] https://mil.am/hy/news/9510
[27] https://mil.am/hy/news/9513
[28] https://mil.am/hy/news/9518

Այսպես, 2021 թ. հուլիսին հայ-ադրբեջանական և ղարաբաղաադրբեջանական շփման գծում հրադադարի ռեժիմը խախտվել է համապատասխանաբար 222 և 232 անգամ

ՀՀ տարածքում փոխհրաձգություններ են տեղի ունեցել ինչպես Գեղարքունիքի մարզի սահմանային հատվածում, այնպես էլ Նախիջևանի՝ Երասխի հատվածում, որոնց արդյունքում մահացել և վիրավորվել են հայ զինծառայողներ:

Բացի հայկական դիրքերի ուղղությամբ կրակ բացելը ադրբեջանական կողմը կրակել է նաև Երասխի և վերին Շորժայի բնակավայրերի ուղղությամբ, ինչի արդյունքում հրազենային վիրավորում է ստացել Երասխ համայնքի ղեկավարը[29]:

2021 թ. հուլիսի 23-ին Ադրբեջանական կողմը նույնիսկ փորձել է ԱԹՍ-ով ՀՀ օդային տարածք մուտք գործել:

2021 թ. հուլիսի 28-ին Ադրբեջանը Մոսկվայում նախատեսվող բանակցություններից առաջ նախահարձակ մարտական գործողություններ է սկսել Հայաստանի սահմանների վրա՝ Սոթքից մինչև Վերին Շորժա հատվածում: Ծավալվել են մարտական գործողություններ, ընթացել է ինտենսիվ փոխհրաձգություն[30]: ՌԴ խաղաղապահ զորքերի հրամանատարության միջնորդությամբ ձեռք է բերվել պայմանավորվածություն հյուսիս-արևելյան ուղղությամբ հայ-ադրբեջանական զորքերի շփման գծում հրադադարի ռեժիմը վերականգնելու վերաբերյալ[31]:

Բացի այդ, 2021 թ. հուլիսի 19-ին Սյունիքի մարզի Տեղ գյուղի սահմանային հատվածում համայնքի բնակիչ կոմբայնավարը, ապակողմնորոշվելով տեղանքում, հայտնվել է ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ գտնվող տարածքում: Նույն օրը հայ դիրքապահների, ռուս սահմանապահների և համայնքի ղեկավարության ջանքերով կոմբայնավարը, ինչպես նաև կոմբայնը, վերադարձվել են հայկական կողմին[32]:

2021 թ. հուլիսի 22-ին ԱՀ/ԼՂ Ասկերանի շրջանի Այգեստան համայնքի բնակիչներից մեկը Խրամորթ համայնքի հատվածում, տեղանքում մոլորվելով, անցել է ադրբեջանական

[29] https://news.am/arm/news/654493.html?fbclid=IwAR1SEbjn0THPrqF5aGKuLkTOGZ9GNVOaAAAH1E_HTaVrF6drBqmJV9MNLfE , https://news.am/arm/news/655636.html
[30] https://www.1in.am/2982959.html
[31] https://www.1in.am/2983016.html?fbclid=IwAR3OiFRpgZcQqMn-o0aFZT98SjX2zd6c2NHEjj5k9pILM791Pd5CxupkeZw
[32] https://mil.am/hy/news/9667

վերահսկողության տակ գտնվող հատված: Հաջորդ օրը ռուս խաղաղապահների միջամտությամբ անձը վերադարձվել է հայկական կողմին[33]:

2021 թ. **օգոստոսին** հայ-ադրբեջանական և ղարաբաղաադրբեջանական շփման գծում հրադադարի ռեժիմը խախտվել է համապատասխանաբար 443 և 219 անգամ:

2021 թ. օգոստոսի 9-ին՝ ադրբեջանական կողմը Շոշ-Մխիթարաշեն հատվածում բացի հրաձգային զինատեսակներից կիրառել է նաև ՀՀՆ-9 (հաստոցավոր հակատանկային նռնականետ)[34]: Մի քանի օր լարված փոխհրաձգությունից հետո օգոստոսի 16-ին ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները Սյունիքի մարզի Սև լճի հատվածում՝ փորձել են դիրքային առաջխաղացում ապահովել[35]:

Բացի այդ, 2021 թ. օգոստոսի 25-ին ԱՀ/ԼՂ մի ադրբեջանցի ներխուժել է Մարտակերտի բնակելի տներից մեկը: Տանն այդ պահին գտնվել են երկու անչափահաս երեխաներ, ովքեր կարողացել են զանգահարել ոստիկանություն, որոնք ժամանել և ձերբակալել են վերջինիս[36]: Հաջորդ օրը Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը հայտարարել է, որ ադրբեջանցի Ջամիլ Բաբաևը ունեցել է հոգեկան խնդիրներ և ինքնակամ լքել է Գյանջայի հիվանդանոցի հոգեբուժական բաժինը[37]:

Այլ միջադեպեր ևս գրանցվել են հայ-ադրբեջանական սահմանին: Մասնավորապես՝ օգոստոսի 25-ին Ադրբեջանը հայտարարել է, թե նախօրեին երկու հայ զինծառայողներ դանակով վնասել են ադրբեջանցի սահմանապահին: Հայկական կողմը հերքել է լուրը: Նույն օրը երեկոյան ժամը 23:00-ի սահմաններում ադրբեջանական կողմը փակել է Կապան-Գորիս միջպետական ճանապարհի Կարմրաքար-Շուռնուխ հատվածը (Գորիս-Որոտան-Շուռնուխ՝ 21 կիլոմետրանոց հատվածը, որը, որը 44-օրյա պատերազմից հետո անցել է ադրբեջանական կողմին): Նշված հատվածում գտնվող տրանսպորտային

[33] https://www.azatutyun.am/a/31373102.html
[34] https://iravaban.net/344951.html
[35] https://mil.am/hy/news/9791
[36] https://t.me/old_hike/624
[37] https://hetq.am/hy/article/134999?utm_source=echo.am&utm_medium=agregator&utm_content=echo.am

միջոցները տարհանվել են»:[38] Երկու օր անց՝ օգոստոսի 27-ին ճանապարհը վերաբացվել է[39]:

Նկատենք, որ Գորիս - Կապան - Ճակատեն ճանապարհի որոշ հատվածների՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցնելուց հետո հայկական կողմը նախաձեռնեց այլընտրանքային ճանապարհների կառուցումը, որն ըստ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ չնախատեսված աշխատանք է և պետք է ավարտվի 2022 թ [40]:

2021թ. սեպտեմբերին հայ-ադրբեջանական և ղարաբաիրավիճակը շփման գծում հրադադարի ռեժիմը խախտվել է համապատասխանաբար 296 և 276 անգամ:

2021թ. հոկտեմբերին հայ-ադրբեջանական սահմանին կրակոցները վերսկսվեցին հոկտեմբերի 4-ին, կրկնվեցին հոկտեմբերի 9-ին, իսկ հոկտեմբերի 15-ին ադրբեջանական կողմը կրակեց ոչ միայն հայկական դիրքերի, այլ նաև քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ[41]: Հրադադարի ռեժիմը խախտվեց 431 անգամ: Իսկ ղարաբաղաադրբեջանական շփման գծում լարվածությունը համեմատաբար պակասեց՝ 174 խախտում:

2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունների դադարից հետո առաջին անգամ հայ-ադրբեջանական լայնածավալ ռազմական գործողություններ ծավալվեցին **2021 թ. նոյեմբերին**, մասնավորապես նոյեմբերի 13-ից[42] կրակոցներով սկսված սահմանային միջադեպը շարունակվեց նոյեմբերի 14-ին[43]: Նոյեմբերի 16-ին ադրբեջանական զինված ուժերը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից բացի սկսեցին կիրառել հրետանային միջոցներ, զրահատեխնիկա: Սահմանային լարվածությունը վերածվեց մեկօրյա լայնածավալ ռազմական գործողությունների՝ հանգեցնելով առնվազն 6 զոհի[44]: Հայկական կողմն ունեցավ նաև 2 դիրքի կորուստ[45]: Ըստ ՀՀ ՊՆ տվյալի՝ նոյեմբերին հրադադարի ռեժիմը հայ-ադրբեջանական շփման գծում խախտվել է 405 անգամ, իսկ ղարաբաղաադրբեջանական շփման գծում՝ 235 անգամ:

[38] https://epress.am/2021/08/26/1456-6.html
[39] www.sns.am/hy/հաղորդագրություններ/2021/08/27/հաղորդագրություն/628
[40] https://www.azatutyun.am/a/31567820.html
[41] https://mil.am/hy/news/10022
[42] https://mil.am/hy/news/10104
[43] https://mil.am/hy/news/10106 , https://mil.am/hy/news/10105
[44] https://mil.am/hy/news/10127 , https://factor.am/444656.html
[45] https://mil.am/hy/news/10116

Հատկանշական է, որ 2021 թ. օգոստոսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում պահեստազորայինների վարժական հավաքներին մասնակցած անձինք 2021 թ. նոյեմբերին վերադառնալով այդ հավաքներից, դեռևս արձանագրում են «լավ պատրաստված դիրքերի» բացակայությունը, շեշտելով, որ 44-օրյա պատերազմից հետո մեկ տարվա ընթացքում ամրացման լուրջ աշխատանքներ չեն արվել, շինարարական տեխնիկա գրեթե չի աշխատել և դիրքերը «դեռևս անմխիթար վիճակում են գտնվում»[46]:

2021 թ. **դեկտեմբերին** հրադադարի ռեժիմը հայ-ադրբեջանական շփման գծում խախտվել է 252 անգամ, իսկ ղարաբաղաադրբեջանական շփման գծում՝ 291 անգամ:

Եվս մեկ անգամ անդրադառնալով հայ-ադրբեջանական և ղարաբաղաադրբեջանական սահմանային գոտու բնակավայրերի անվտանգության մակարդակի բարձրացման անհրաժեշտությանը՝ նշենք, որ ադրբեջանական զինված ուժերի զինծառայողների թիրախ են դառնում ոչ միայն զինծառայողներ, այլև քաղաքացիական անձինք:

Այսպես, ըստ Արցախի ներքին գործերի նախարարության խոսնակի՝ 2021 թ. հոկտեմբերի 9-ին Արցախի Մարտակերտի հարակից տարածքում գտնվող այգում այգեգործական աշխատանքներ կատարելիս Ադրբեջանի զինված ուժերի դիպուկահարի կրակոցից սպանվել է քաղաքի 55-ամյա բնակիչ Արամ Տեփնանցը[47]:

Մոտ տասն օր անց՝ Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի ֆեյսբուքյան էջում տեղեկատվություն տարածվեց այն մասին, որ հոկտեմբերի 17-ին Ադրբեջանի զինված ուժերի հրթիռակոծության հետևանքով Արցախի Մարտունի քաղաքում սպանվել է 65-ամյա Վլադիմիր Միրզոյանը, ևս մեկ քաղաքացի վիրավորվել է[48]:

2021 թ. դեկտեմբերի 3-ին ադրբեջանցի զինվորականները հեռահար կրակոցով սպանել են Արցախի Ճարտար համայնքի բնակիչ, 65-ամյա անասնապահ Սեյրան Սարգսյանին[49], որից հետո, ըստ Արցախի դատախազության, նրա մարմինը չեզոք գոտուց տեղափոխել են իրենց մարտական դիրք տպավորություն ստեղծելու համար, որ Սեյրան Սարգսյանը «հարձակվել և փորձել է խլել ադրբեջանցի զինծառայողի զենքը», ինչպես

[46] https://www.azatutyun.am/a/31581703.html
[47] https://www.azatutyun.am/a/31501111.html
[48] https://armenpress.am/arm/news/1032137.html
[49] https://armeniasputnik.am/20211225/tshartari-bnakchin-spanel-en-herahar-krakvocvov-nvor-hangamanqner-en-i-hajt-ekel-36866313.html

հայտնել են ադրբեջանական լրատվամիջոցները, հավելելով, որ իբր նախազգուշական կրակից հետո ադրբեջանցի զինծառայողը ինքնապաշտպանության նպատակով վնասազերծել է հայ քաղաքացուն[50]: Արցախի դատախազության տարածած տեղեկատվության համաձայն ադրբեջանական լրատվամիջոցների ներկայացրած վարկածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ հանգամանքները պարզվել են դեպքի վայրի հարևանությամբ տեղակայված տեսադիտարկման սարքերի արձանագրած տեսանյութերի հետազոտման արդյունքում:

Նշված բոլոր դեպքերը վկայում են այն մասին, որ ակտիվ պատերազմական գործողությունների ավարտից հետո ևս իրադրությունը հայ-ադրբեջանական և ղարաբաղա-ադրբեջանական շփման գծում շարունակում է մնալ լարված՝ երբեմն դրսևորվելով զինծառայողների և քաղաքացիական անձանց գերեվարման դեպքերով՝ Ադրբեջանի կողմից,որոնք ուղեկցվում են մարտական գործողություններով և հրազենի կիրառմամբ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

[50] https://www.lragir.am/2021/12/03/685584/

2021 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ԵՎ ԱՀ/ԼՂ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. **Գևորգ Խուրշուդյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. հունիսի 25-ին Գեղարքունիքի մարզի Վերին Շորժայի սահմանային հատվածում ադրբեջանական զինված ուժերի արձակած կրակահերթերից հետո սկսված փոխհրաձգության արդյունքում որովայնի շրջանում ստացած հրազենային վիրավորման արդյունքում մահացել է պայմանագրային զինծառայող, կրտսեր սերժանտ Գևորգ Խուրշուդյանը[51]*:*

Զինծառայողի մահվան փաստի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ և 13-րդ կետերով (սպանությունը՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով):

Հետագայում, ըստ Կազմակերպությանը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության, քրեական գործի վարույթը կասեցվել է անհաղթահարելի ուժ գործելու հիմքով:

2. **Լևոն Եղիազարյան**

Պայմանագրային զինծառայող Լևոն Եղիազարյանը վիրավորում է ստացել 2020 թ. նոյեմբերի 3-ին՝ պատերազմական գործողությունների ընթացքում, մահացել է 2021 թ. հունվարի 15-ին: Նշենք, որ տվյալը Կազմակերպությանը տրամադրվել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից:

Զինծառայողի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով (ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն): Կատարվում է նախաքննություն:

3. **Հրաչ Նազարյան**

Պայմանագրային զինծառայող Հրաչ Նազարյանը վիրավորում է ստացել 2020 թ. հոկտեմբերի 2-ին, մահացել է 2021 թ. փետրվարի 3-ին: Նշենք, որ տվյալը Կազմակերպությանը տրամադրվել է ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից:

[51] https://mil.am/hy/news/9462

Զինծառայողի մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով (ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից սպանություն)։ Կատարվում է նախաքննություն։

4. **Սամվել Ալավերդյան**

Ըստ ՀՀ ՊՆ տարածած տեղեկատվության՝ 2021 թ. հուլիսի 14-ին, հայ-ադրբեջանական շփման գծի Երասխի հատվածում ադրբեջանական զինված ուժերի կողմից արձակված կրակոցի հետևանքով մահացել է պայմանագրային զինծառայող, շարքային Սամվել Գագիկի Ալավերդյանը (ծնված 1983 թ.)[52]*:*

Ըստ forrights.am կայքին զինծառայողի հոր՝ Գագիկ Ալավերդյանի հայտնած տվյալի՝ դեպքը տեղի ունենալու առավոտյան որդին զանգահարել եւ խոսել է հոր հետ[53]:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 6-րդ, 13-րդ կետերով:

Հետագայում, ըստ Կազմակերպությանը ՀՀ զիվնվորական կենտրոնական դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության, քրեական գործով վարույթը կասեցվել է՝ անհաղթահարելի ուժ գործելու հիմքով:

5. **Հայկ Գևորգյան**
6. **Կորյուն Հարությունյան**
7. **Դավիթ Քոչարյան**

Ըստ ՀՀ ՊՆ տարածած տեղեկատվության՝ 2021 թ. հուլիսի 28-ին ադրբեջանական զինված ուժերի կողմից արձակված կրակոցի հետևանքով մահացել են ժամկոտային զինծառայողներ ավագ լեյտենանտ Հայկ Հովհաննեսի Գևորգյանը, շարքային Կորյուն Արայիկի Հարությունյանը և շարքային Դավիթ Գառնիկի Քոչարյանը[54]*:*

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 7-րդ և 13-րդ կետերով և ՀՀ քրեական օրոնսգրքի 300.2 հոդվածով:

Ըստ Բերդի համայնքապետարանի տարածած հաղորդագրության՝ Դավիթ Քոչարյանը Բերդ համայնքի Չինչին գյուղից էր։ Նա մասնակցել էր նաև 2020 թ. 44-օրյա պատերազմին[55]:

«Արմենիասպուտնիկ» կայքի տվյալներով՝ սպա Հայկ Գևորգյանը ևս 44–օրյա պատերազմի մասնակից էր[56]:

---

[52] https://mil.am/hy/news/9643
[53] https://forrights.am/2021/07/17/%d5%a5%d6%80%d5%a1%d5%bd%d5%ad%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a6%d5%b8%d5%b0%d5%be%d5%a1%d5%ae-%d5%a6%d5%ab%d5%b6%d5%ae%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%b8%d5%b2%d5%a8-%d5%af%d6%84%d5%a1%d5%ae-%d5%a7%d6%80-%d5%be/
[54] https://www.mil.am/hy/news/9706?fbclid=IwAR00dexc9a_J0nx4Xka67yFCg5v8VjsbcId_ey0XjR1rg-nGIjbvqP5OSVY
[55] https://armtimes.com/hy/article/219488?fbclid=IwAR2sWWJySaZwDTbpH6mIGFm1Z90l9FvkJNw0nbEEdu7Qfd_9KhqoNwa_aP0
[56] https://armeniasputnik.am/20210728/44-orya-paterazm-eskalacya-hay-adrbejanakan-sahman-28467977.html

Ըստ Կորյուն Հարությունյանի հարազատներից մեկի «news.am» կայքին փոխանցած տվյալների, զինծառայողը Կոտայքի մարզի Հրազդան քաղաքից էր, 18 տարեկան[57]:

8. **Վահան Թաթոսյան**

ՀՀ ՊՆ տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021 թ. օգոստոսի 16-ի առավոտյան ժամը 09:50-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերի դիպուկահարի արձակած կրակոցից մահացել է ՋՈՒ զորամասերից մեկի զինծառայող, 1975թ. ծնված, ավագ ենթասպա Վահան Դիմիկի Թաթոսյանը[58]:

Ըստ «forrights.am» կայքի՝ Վահան Թաթոսյանը ավելի քան տաս տարի ծառայում էր ՀՀ զինված ուժերում[59]: Նա մի քանի ամիս առաջ էր ապաքինվել 44-օրյա պատերազմի ժամանակ ստացած վիրավորումից եւ կրկին անցել ծառայության:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետերով:

Հետագայում, ըստ Կազմակերպությանը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության, քրեական գործով վարույթը կասեցվել է՝ անհաղթահարելի ուժ գործելու հիմքով:

9. **Արման Հակոբյան**

Ըստ ՀՀ ՊՆ տարածած տեղեկատվության՝ 2021 թ. օգոստոսի 16-ին, ժամը 18:10-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերի կրակոցից մահացել է ՀՀ ՋՈՒ զորամասերից մեկի զինծառայող, 2002թ. ծնված, շարքային Արման Հովհաննեսի Հակոբյանը[60]:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ և 13-րդ կետերով հարուցվել է քրեական գործ, և կատարվում է նախաքննություն:[61]

10. **Գեղամ Սահակյան**

Ըստ ՀՀ ՊՆ տարածած տեղեկատվության՝ 2021 թ. սեպտեմբերի 1-ին, ժամը 11:10-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերի ստորաբաժանումները հրաձգային զինատեսակներից և դիպուկահար հրացաններից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի Արարատի մարզի, մասնավորապես՝ Երասխի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով մահացել է ՀՀ ՊՆ զորամասերից մեկի

[57] https://livenews.am/press/2021/123598/28/18/04/
[58] https://mil.am/hy/news/9792
[59] https://forrights.am/2021/08/16/%d5%a5%d6%80%d5%a1%d5%bd%d5%ad%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a1%d5%b5%d5%bd%d6%85%d6%80-%d5%a6%d5%b8%d5%b0%d5%be%d5%a1%d5%ae-%d5%a1%d5%be%d5%a1%d5%a3-%d5%a5%d5%b6%d5%a9%d5%a1%d5%bd%d5%ba%d5%a1%d5%b6-%d5%b4/
[60] https://mil.am/hy/news/9798
[61] https://www.investigative.am/news/view/arman-hakobyan.html

պայմանագրային զինծառայող, 1982 թ. ծնված, կրտսեր սերժանտ Գեղամ Լյովայի Սահակյանը[62]*:*

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ութերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 13-րդ կետերով[63]:

Հետագայում, ըստ Կազմակերպությանը ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից տրամադրված տեղեկատվության, քրեական գործով վարույթը կասեցվել է՝ անհաղթահարելի ու գործելու հիմքով:

11. **Սուրեն Սաֆարյան**

«Արմենպրես» կայքին ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնած տեղեկության համաձայն՝ 2021 թ. նոյեմբերի 22-ին Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի, մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզի Նորաբակ գյուղի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով մահացել է ՀՀ ՊՆ զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, շարքային Սուրեն Յուրիկի Սաֆարյանը (ծնվ. 2002թ.)[64]*:*

Զինծառայողը Արագածոտնի մարզի Ալագյազ համայնքից էր, ազգությամբ՝ եզդի: Համայնքի ղեկավար Ջասմ Մախմուդովը NEWS.am-ի[65] հետ զրույցում տեղեկացրեց, որ զինծառայողը զորակոչվել էր ծառայության մեկ տարի առաջ՝ 2020 թ.:

Փաստի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ, 7-րդ և 13-րդ կետերով հարուցվել է քրեական գործ[66]:

Կատարվում է քննություն

12. **Գոռ Մարտիրոսյան**

ՀՀ ՊՆ տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021 թ. դեկտեմբերի 5-ին ժամը 21:20-ի սահմաններում ՊԲ զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացել է ստացել ՊԲ ժամկետային զինծառայող 2002 թ. ծնված Գոռ Էդուարդի Մարտիրոսյանը[67]*:*

Դեկտեմբերի 7-ին ՀՀ քննչական կոմիտեից civic.am-ին հայտնած տեղեկությունների համաձայն՝ զինծառայողը մահացել է ադրբեջանական զինված ուժերի արձակած կրակոցից:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերի հատկանիշներով:

---

[62] https://mil.am/hy/news/9878
[63] https://www.investigative.am/news/view/zincarayogh-geghan-sahakyan.html
[64] https://armenpress.am/arm/news/1068859.html
[65] https://news.am/arm/news/673729.html
[66] https://investigative.am/news/view/surik-safaryan.html
[67] http://nkrmil.am/news/view/3293

Լրատվամիջոցին[68] քննչական կոմիտեից տեղեկացվել է, որ դեպքը տեղի է ունեցել չեզոք գոտում՝ Շուշիի «Նոյան Տապան» կոչվող նախկին հյուրանոցի մոտակայքում: Զինծառայողը և իր ընկերը շարժ են նկատել և, ըստ վարույթ իրականացնող մարմնի, Գոռ Մարտիրոսյանի ծառայակիցը առաջարկել է վերադառնալ դիրքեր, սակայն վերջինս հրաժարվել է: Սկսվել է հրաձգություն, Գոռ Մարտիրոսյանն իր մոտ գտնվող ինքնաձիգից 15 կրակոց է արձակել: Ըստ ՔԿ-ի հայտնած տեղեկության՝ Ադրբեջանի ԶՈՒ դիրքն այդ տարածքից բավական հեռու է: Դեպքն արձանագրվել է չեզոք տարածք ադրբեջանց զինծառայողների մուտք գործելու արդյունքում:

Այնուամենայնիվ, զինծառայողի հարազատները չեն հավատում վարույթն իրականացնող մարմնի վարկածին: Գոռ Մարտիրոսյանի հարազատներից մեկը «Փաստինֆո»-ի[69] հետ զրույցում հայտնել է, որ զինծառայողը կյանքի հետ անհամատեղելի վնասվածքն ստացել է ոչ թե գլխի, այլ՝ կրծքի շրջանում (կրծքից երկու-երեք մատ վերև), ընդ որում, այնքան մոտ հեռավորությունից (10 մետր), որ մաշկն այրվել է, փամփուշտը թիկունքից դուրս է եկել, իսկ վերքը վարդի տեսքով է եղել՝ գրեթե բռունցքի չափ: Ըստ հարազատի՝ զինծառայողի ձեռքերն արյան մեջ են եղել, սակայն զենքը՝ ոչ: Հարազատի համոզմամբ՝ զինծառայողին կրակել են այլ վայրում, քարշ տալով տեղափոխել են մեկ այլ վայր, հետո նրա հրազենից արձակել 15 կրակոց, որպեսզի տպավորություն ստեղծվի, որ դիվերսիոն ներթափանցում է տեղի ունեցել:

Գոռ Մարտիրոսյանը ծառայել է «Ցոր» կոչվող զորամասում, իսկ դեպքը տեղի է ունեցել ոչ թե մարտական դիրքում, այլ ավելի հեռու, հետեւապես հարազատների մոտ հարց է ծագում, թե դիվերսիոն խումբն այդտեղ ինչպես է հասել: Հարազատները բացառում են դիվերսիոն ներթափանցման վարկածը, քանի որ մինչ նշված վայրը՝ Շուշիի «Նոյան Տապան» կոչվող նախկին հյուրանոցի տարածք հասնելը, ադրբեջանցի զինծառայողները հայ դիրքապահների կողքով պիտի անցնեին: Բացի այդ, հարազատը կասկածելի է համարում այն հանգամանքը, որ Գոռ Մարտիրոսյանը գտնվելով դիրքերից հեռու, իր մոտ զենք է ունեցել:

Ըստ Գոռ Մարտիրոսյանի հարազատի, զինծառայողը սպայական կազմի հետ նախկինում խնդիր է ունեցել, այդ պատճառով հարազատները կարծում են, որ փորձ է արվում թաքցնել դեպքի իրական պատճառները:

Գոռ Մարտիրոսյանը բնակվում էր Ռուսաստանում: Նա Հայաստան էր վերադարձել ծառայություն անցնելու նպատակով: Զորակոչվել էր 2021 թ. ամառային զորակոչին: Մասնակցել էր 2020 թ. 44-օրյա պատերազմին:

13. **Վահե Մանասերյան**

ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021 թ. դեկտեմբերի 10-ին Ադրբեջանի ԶՈՒ ստորաբաժանումների ձեռնարկած նախահարձակ գործողությունների

[68] https://civic.am/society/21111--5-.html
[69] https://www.pastinfo.am/hy/news/2021/12/11/jygbil9p6/1317358?fbclid=IwAR13Tws0ei0LQ7USEj3tOrdMbsqxmHpKrlEo0pLrpm6SJr8ULodT0AZpDak

արդյունքում ծավալված փոխհրաձգության հետևանքով զոհվել է ՀՀ ՊՆ զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, շարքային Վահե Վաղարշակի Մանասերյանը (ծնվ. 2002թ.) [70]:

Դեպքի փաստով հարուցվել է քրեական գոր ՀՀ քրեական օրենսգրքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով: Կատարվում է քննություն:

2021 թ. նոյեմբերին հայ-ադրբեջանական շփման գծում տեղի ունեցած գործողությունների հետեւանքով մահվան դեպքեր

1. **Տարոն Սահակյան**
2. **Մերուժան Հարությունյան**
3. **Գուրգեն Սարգսյան**
4. **Արթուր Մարտիրոսյան**
5. **Դավիթ Ամիրյան**
6. **Արսեն Գասպարյան**

2020 թ. 44-օրյա պատերազմական գործողությունների դադարից հետո առաջին անգամ հայ-ադրբեջանական լայնածավալ ռազմական գործողություններ ծավալվեցին 2021 թ. նոյեմբերին Սյունիքի մարզի Իշխանասարի հատվածում: Մասնավորապես՝ նոյեմբերի 13-ից[71] կրակոցներով սկսված սահմանային միջադեպը շարունակվեց նոյեմբերի 14-ին[72]: Այնուհետեւ, նոյեմբերի 16-ին ադրբեջանական զինված ուժերը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից բացի սկսեցին կիրառել հրետանային միջոցներ, զրահատեխնիկա: Ծավալված ռազմական գործողությունների հետևանքով հայկական կողմն ունեցավ 6 զոհ[73]՝ **ավագ լեյտենանտ Տարոն Ջիվանի Սահակյան (1990թ. ծնված), պայմանագրային զինծառայող՝ կրտսեր սերժանտ Մերուժան Արթուրի Հարությունյան (1991թ. ծնված), պայմանագրային զինծառայող շարքային Գուրգեն Աշոտի Սարգսյան (1990թ. ծնված), պայմանագրային զինծառայող կրտսեր սերժանտ Արթուր Ջիվանի Մարտիրոսյան (1998թ. ծնված), պայմանագրային զինծառայող շարքային Դավիթ Հելբերտի Ամիրյան (1980թ. ծնված), Արսեն Մենիկի Գասպարյան:**

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տեղեկատվության համաձայն՝ զինծառայողների մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրոնսգիքի ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով՝ երկու կամ ավելի անձանց սպանություն՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով: Քրեական գործեր են հարուցվել նաև, ՀՀ քրեական օրենսգրքի 34-104 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 6-րդ, 7-րդ և 13-րդ կետերով (երկու

[70] https://mil.am/hy/news/10192, https://news.am/arm/news/676893.html
[71] https://mil.am/hy/news/10104
[72] https://mil.am/hy/news/10106 , https://mil.am/hy/news/10105
[73] https://mil.am/hy/news/10127 , https://factor.am/444656.html

կամ ավելի անձանց սպանության փորձ), 185-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (ուրիշի գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը, որն առանձնապես խոշոր չափերի վնաս է պատճառել), 384-րդ հոդվածի 2-րդ մասով (ագրեսիվ պատերազմ սանձազերծելը կամ վարելը), 390-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով (զինված ընդհարումների ժամանակ ռազմական գործողություններին անմիջականորեն չմասնակցող… անձանց սպանությունը,խոշտանգումները և անմարդկային վերաբերմունքը, ներառյալ՝ կենսաբանական փորձերը), 391-րդ հոդվածի 3-րդ մասով (զինված ընդհարման ժամանակ պետի կամ պաշտոնատար անձի կողմից իր ենթակային՝ ոչ մեկին ողջ չթողնելու կամ ակնհայտ հանցավոր այլ հրաման կամ կարգադրություն տալը, որն ուղղված է սույն օրենսգրքի 387-րդ և 390-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների կատարմանը)։

Նշենք, որ զոհված զինծառայողների մեծ մասը մահացել են գերավարվելուց հետո։ Ըստ ՀՀ քննչական կոմիտեի[74] տարածած հաղորդագրության՝ զինծառայողներ Գուրգեն Սարգսյանի, Արթուր Մարտիրոսյանի, Դավիթ Ամիրյանի, Տարոն Սահակյանի և Արսեն Գասպարյանի սպանված դիերը փոխանցվել են հայկական կողմին 2021թ. նոյեմբերի 17-ին, 19-ին և 20-ին։

2021 թ. դեկտեմբերի 6-ին մարտական դիրքի պատասխանատու, լեյտենանտ Ս.Ա.-ն, դիրքի ավագ, կրտսեր սերժանտ Ա.Ա.-ն, դիտորդներ Ռ.Ն.-ն և Ա.Մ.-ն ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետևանքներ) կասկածանքով ձերբակալվել են։ Նրանց մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ։ Որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը։

Բացի այդ, քննչական և այլ դատավարական գործողությունների արդյունքում պարզվել է, որ զորամասի գումարտակի հրամանատարի բարոյահոգեբանական ապահովման գծով տեղակալ, մայոր Ն.Ե.-ն, նշանակված լինելով որպես նույն գումարտակի պահպանությանը հանձնված մարտական դիրքերից մեկի ավագ, խախտել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքով, սահմանված կանոնները, ինչն առաջացրել է ծանր հետևանքներ։

2021 թվականի դեկտեմբերի 6-ին մայոր Ն.Ե.-ն ձերբակալվել է, վերջինիս մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով։ Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը դատարանի կողմից մերժվել է։

Նախաքննությունը շարունակվում է։

ՀՀ ՔԿ կողմից նաև առանձին անդրադարձ է կատարվել մարտական հերթապահություն իրականացնող պայմանագրային զինծառայող, շարքային Գուրգեն Աշոտի Սարգսյանին, ով գերեվարման փորձի պայմաններում չի հանձնվել և քաշելով նռնակի օղակը՝ պայթեցրել է իրեն։

[74] https://www.investigative.am/news/view/zincarayogh-kalanavorum.html

Որոշ լրատվամիջոցների հաջողվել է տեղեկություններ ձեռք բերել մահացած զինծառայողների, ինչպես նաև դեպքի որոշ մանրամասների վերաբերյալ:

Այսպես, ըստ «Փաստինֆո» կայքի տվյալների՝ մահացած զինծառայողներից Տարոն Սահակյանը Տավուշի մարզից էր՝ Ոսկեպարից: Բնակվում էր Կողբ գյուղում: Զինծառայողը նախկինում աշխատել է իրավապահ համակարգում, ապա՝ տեղափոխվել Ռուսաստան, հետագայում վերադարձել և ծառայության անցել Ջերմուկում:

Հարազատները ոչ հավաստի տվյալներ ունեն այն մասին, որ հայկական կողմը ադրբեջանցի զինծառայողներ է գերեվարել, ապա հրաման են ստացել ազատ արձակել նրանց: Տարոն Սահակյանը կատարել է հրամանը, որից հետո ինքը գերեվարվել է:

Սպայի աճյունը Ադրբեջանի կողմից վերադարձվել է խոշտանգված վիճակում[75]:

Մերուժան Հարությունյանը ծնունդով Գյումրիից էր, բնակվում էր Երևանում: Նա պայմանագրային զինծառայության էր անցել 3 տարի առաջ: Նա եղբոր հետ ծառայությունն անցկացրել է հիմնականում Գորիսում և Սիսիանում: Զինծառայողի եղբոր կինը՝ Լիլիթ Հարությունյանը, «Հայկական Ժամանակի» թերթի հետ զրույցում պատմեց, որ զոհվելու օրը հարազատները կապ են հաստատել նրա հետ, զինծառայողն ասել է, որ լավ է: Մերուժան Հարությունյանը մասնակցել էր նաև 44-օրյա պատերազմին, ստացել վիրավորում, սակայն մարտը շարունակել էր մինչև պատերազմի ավարտը: Ընտանիքը նրա մահվան մասին տեղեկացել է մամուլից[76]:

Ամփոփելով հրադադարի ռեժիմի խախտման հետևանքով մահվան դեպքերը՝ արձանագրում ենք, որ թեև 2020 թ նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների կողմից ստորագրվեց եռակողմ հայտարարություն, դեռևս շարունակվում են հրադադարի ռեժիմի խախտման դեպքերը ինչպես Արցախի, այնպես էլ Հայաստանի հետ Ադրբեջանի շփման գծում: Սահմանային միջադեպերի արդյունքում թիրախավորվում են ոչ միայն բնակելի տներ, այլ նաև փաստացի արձանագրվում են զինծառայողների մահացության և վիրավորման դեպքեր:

Բ.Ինքնասպանություն
Զինվորական ծառայության հետ կապված

1. **Նարեկ Խաչատրյան**

ՀՀ ՊՆ կողմից տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021 թ. ապրիլի 20-ին, ժամը 11:00-ի սահմաններում, ՀՀ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի հարակից տարածքում հայտնաբերվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Նարեկ Սնակի Խաչատրյանի մարմինը՝ ծառից կախված վիճակում[77]:

[75] https://www.lraqir.am/2021/11/18/682264/
[76] https://www.armtimes.com/hy/article/225510
[77] https://mil.am/hy/news/9260

Կազմակեպությանը պաշտոնական աղբյուրի կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ զինծառայողը հայտնաբերվել է Մեղրի համայնքի Լիճք գյուղի հարակից զինավանից մոտ 2 կմ դեպի հյուսիս-արևմուտք գտնվող անտառում:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-ին հոդվածի 1-ին մասով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը): Կատարվում է նախաքննություն[78]:

«armlur.am» կայքի տվյալներով՝ Նարեկ Խաչատրյանը Արագածոտնի մարզի Թալին քաղաքից էր: Զորակոչվել էր զինծառայության առողջական խնդիրներով[79]: Այլ մանրամասներ դեպքի մասի հայտնի չեն:

2. Մկրտիչ Հովհաննիսյան

Ժամկետային զինծառայող, շարքային Մկրտիչ Հովհաննեսի Հովհաննիսյանի մահվան վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած նախնական տվյալների համաձայն՝ զինծառայողը մահացել է 2021 թ. մայիսի 24-ին, ժամը 17:40-ի սահմաններում՝ զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով արձակված կրակոցից[80]:

Հետագայում ՀՀ քննչական կոմիտեն տարածեց տեղեկատվություն այն մասին, որ զինծառայողը մահացել է զորամասի շարահրապարակում իրեն ամրակցված «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգից իր գլխի շրջանում կրակոց արձակելու հետևանքով:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մասով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը): Կատարվում է նախաքննություն[81]:

3. Մհեր Հովհանիսյան

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. մայիսի 25-ին, ժամը 13:00-ի սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան հատվածում տեղակայված զորամասերից մեկում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Մհեր Կարենի Հովհաննիսյանը՝ գլխի շրջանում ստացած հրազենային վնասվածքով[82]:

ՀՀ քննչական կոմիտեի տարածած տեղեկատվության համաձայն՝ Մհեր Հովհաննիսյանը զորամասի զինանոցում կրակահերթ է արձակել իր գլխի շրջանին «ԱԿՄ» տեսակի ինքնաձիգից: Ստացած հրազենային վնասվածքներով զինծառայողը տեղափոխվել է Նոյեմբերյանի ԲԿ, որտեղ մահացել է:

[78] https://www.investigative.am/news/view/zincarayogh-narek-khachatryan.html
[79] https://armlur.am/1100488/
[80] https://mil.am/hy/news/9459
[81] https://www.investigative.am/news/view/zincarayogh-mkrtich-hovhannisyan.html
[82] https://mil.am/hy/news/9463

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 1-ին մասով (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը)։ Կատարվում է նախաքննություն[83]:

4. **Սարգիս Գրիգորյան**

Արցախի պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2021 թ. հուլիսի 26-ին՝ ժամը 22:26-ի սահմաններում, ԱՀ/ ԷՂիյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում մահացել է ՊԲ պարտադիր ժամկետային զինծառայող, 2002թ. ծնված Սարգիս Ժիրայրի Գրիգորյանը[84]:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության կայազորային վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով հարուցված քրեական գործով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ զինծառայողը կրակային դիրքում իրեն ամրակցված ԱԿ տեսակի ինքնաձիգից արձակել է մենահատ կրակոց իր կրծքավանդակի ձախ շրջանում[85]:

Դեպքի փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-ին մասի 3-րդ կետով՝ զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու ընթացքում:

Սարգիս Գիգորյանը մասնակցել էր 2020 թ. 44-օրյա պատերազմին, վիրավորվել էր ոտքի և մեջի հատվածում: Պատերազմից հետո ապաքինվել էր, ապա տեղափոխվել Վայքի զորամաս: 15 օր այնտեղ ծառայելուց հետո Սարգիս Գրիգորյանն ինքնակամ մեկնել է Արցախ, քանի որ ցանկացել է ընկերների հետ լինել: Ըստ «forrights.am» կայքի տվյալների՝ զինծառայողի մայրը դեպքից կես ժամ առաջ է խոսել նրա հետ: Վերջինս որևէ խնդրի մասին չի նշել, ձայնը ուրախ է եղել[86]:

Զինվորական ծառայության հետ չկապված

5. **Ռոման Բաղդատյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. մայիսի 14-ին, ժամը 07.00-ի սահմաններում, հայտնաբերվել է ՀՀ ՊՆ զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, շարքային Ռոման Գրիշայի Բաղդատյանի մարմինը՝ կախված վիճակում[87]:

«news.am»-ին ՀՀ քննչական կոմիտեի կողմից հայտնած տեղեկատվության համաձայն՝ զինծառայողը 2021թ. մայիսի 13-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում ինքնակամ թողել է

[83] https://www.investigative.am/news/view/zincarayogh-mher-hovhannisyan.html
[84] https://www.facebook.com/artsakhdefencearmy/posts/4585830308115970
[85] https://www.investigative.am/news/view/zincarayox-sargis-grigoryan.html
[86] https://forrights.am/2021/08/11/44-%d6%85%d6%80%d5%b5%d5%a1-%d5%ba%d5%a1%d5%bf%d5%a5%d6%80%d5%a1%d5%a6%d5%b4%d5%b6-%d5%a1%d5%b6%d6%81%d5%a1%d5%be-%d5%a2%d5%a1%d5%b6-%d5%b9%d5%a5%d5%b2%d5%a1%d5%be-%d5%a6%d5%b8%d6%80%d5%a1%d5%b4/
[87] https://mil.am/hy/news/9402

զորամասի տարածքը եւ վերադարձել տուն: Հաջորդ առավոտյան զինծառայողի ընտանիքի անդամները Ռոման Բաղդատյանին հայտնաբերել են իրենց ավտոտնակում՝ պարանոցից կախված վիճակում:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը)[88]:

Կատարվում է նախաքննություն[89]:

6. Պարգև Մարգարյան

Ըստ Արցախի պաշտպանության նախարարության տարածած տեղեկատվության՝ 2021 թ. հուլիսի 31-ին՝ ժամը 11:30-ի սահմաններում որոնողական աշխատանքների արդյունքում ՊՆ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մշտական տեղակայման վայրից 2.5 կմ հեռավորության վրա հայտնաբերվել է անհայտ հանգամանքներում զորամասը լքած ՊԲ զինծառայող 1998թ. ծնված Պարգև Նվերի Մարգարյանի դին[90]:

Ըստ աղբյուրի՝ Պարգև Մարգարյանի դին հայտնավերվել է՝ «աջ դաստակի ամպուտացիա, կրծքավանդակի և որովայնի շրջանների վնասվածքներով»: Նախնական տվյալների համաձայն՝ ՊարգևՄարգարյանը վնասվածքներն ստացել է իր մոտ ապօրինի պահվող նռնակի պայթյունի հետևանքով:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի (զինծառայողին անզգուշությամբ ինքնասպանության հասցնելը) 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) նախատեսված հանցագործությունների հատկանիշներով:

Կատարվում է նախաքննություն[91]:

«forrights.am»-ի հետ զրույցում զինծառայողի հարազատները հայտնել են, որ անհետանալու օրը՝ հուլիսի 29-ի առավոտյան Պարգևը մորը նամակ է գրել, հայտնելով, որ գնացել է Սարսանգի ջրամբար՝ ինժեներական աշխատանքներ կատարելու: Հարազատներին՝ ծառայակիցներից հասած տեղեկությունների համաձայն՝ զինծառայողը հեռախոսազանգ է ստացել, որից հետո տրամադրությունը կտրուկ ընկել է: Նա դուրս է եկել զորամասից ժամը 15.00-ին ու գնացել անհայտ ուղղությամբ: Ըստ հարազատների՝ նրա ձեռքին ոչինչ չի եղել, այդ թվում՝ նռնակ[92]:

---

[88] https://news.am/arm/news/643792.html?fbclid=IwAR3qnGhfwacgbsD6lqU6I8Cho8vCEI4DsirdAnhbfQyY_OyihNU7CP2sV6q
[89] https://www.investigative.am/news/view/zincarayogh-rb.html
[90] https://nkrmil.am/news/view/3250
[91] https://www.investigative.am/news/view/pargev-margaryan.html
[92] https://forrights.am/2021/08/25/%d5%a5%d6%80%d5%af%d5%b8%d6%82-%d5%b4%d5%a1%d5%b0-%d5%a5%d6%80%d5%a5%d6%84-%d6%85%d6%80%d5%b8%d6%82%d5%b4-

7. **Գևորգ Գասպարյան**

ՀՀ քննչական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2021թ. օգոստոսի 7-ին՝ Գյումրի քաղաքի Ալավերդյան փողոցի տներից մեկի բակում հայտնաբերել են Գյումրի քաղաքի բնակիչ, ՀՀ ՊՆ զորամասերից մեկի զինծառայող, կապիտան, 1986թ. ծնված Գևորգ Գասպարյանի և վերջինիս հղի կնոջ դիերը՝ նռնակի պայթյունին բնորոշ հետքերով և վնասվածքներով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության տասներորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով և 235-րդ հոդվածի 1-ին մասով[93]:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկատվության համաձայն՝ դեպքը դասակարգվել է որպես ինքնասպանություն:

8. **Մակիչ Իգնաթևոսյան**

2021 թ. սեպտեմբերի 14-ին Արարատի մարզի Հովտաշատ գյուղ, որտեղ «Զինական 5» տարածքում հայտնաբերվել է պայմանագրային զինծառայող Մակիչ Իգնաթևոսյանի դին՝ կախված վիճակում:

Դեպքի մասին հայտնի է դարձել լրատվամիջոցներից, մասնավորապես «shamshyan.com» կայքից[94]:

Հետագայում ՀՀ ՔԿ կողմից տեղեկացվել է, որ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնում նախապատրաստվում են նյութեր պայմանագրային զինծառայողի մահվան դեպքի առթիվ[95]:

Այնուամենայնիվ, գործի հետագա ընթացքի մասին չի տեղեկացվել ոչ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության և ոչ էլ ՀՀ քննչական կոմիտեի կողմից՝ ի պատասխան Կազմակերպության գրավոր հարցման:

9. **Գևորգ Ավետյան**

ՀՀ ՊՆ կողմից լրատվամիջոցներին հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2021 թ. նոյեմբերի 15-ին Գեղարքունիքի մարզի Ճամբարակի զորամասում զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով վիրավորվել, ապա նոյեմբերի 16-ին հիվանդանոցում

%d5%a5%d6%80%d5%af%d5%b8%d6%82%d5%bd%d5%b6-%d5%a7%d5%ac-%d5%ab%d5%b6%d6%84%d5%b6%d5%a1%d5%bd-2/?fbclid=IwAR3hS_0PiQQg0KEU12tGl_PCPZLjSFjpy2I-fD7E-eyp-ySKcww3xcpqtEQ

[93] https://www.investigative.am/news/view/amusinneri-spanutyun-gyumri.html

[94] https://shamshyan.com/hy/article/2021/09/14/1196049/

[95] https://investigative.am/news/view/zinvor-mah-zinvorakan-avan.html

(ԿԿԶՀ-ում) մահացել է պայմանագրային զինծառայող, շարքային Գևորգ Խաչատուրի Ավետյանը (ծնվ. 1992թ.)[96]:

«Ազատության» [97] հետ զրույցում զինծառայողի եղբայրը՝ Գուրգեն Ավետյանը կարծիք է հայտնել, որ իր եղբորը դաժանաբար ծեծել են, ապա՝ սպանել: Վերջինս անտրամաբանական է համարում ՊՆ վարկածը զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետևանքով զինծառայողի մահվան վերաբերյալ, քանի որ ինքը եղբոր մարմնին տեսել է երեք կրակոցների հետքեր, կապտուկներ՝ աչքի, ականջի հատվածում, գլխի վրա, վզին, թևին, արմունկին, ոտքին, մեջքին, որոնք, ըստ եղբոր, նման էին ծանր առարկայով հարվածի հետքերի:

Զինծառայողի եղբայրը նաև հայտնել է, որ զինծառայողը դժգոհել է դիրքերում տիրող իրավիճակից, ցանկացել է տեղափոխվել այլ դիրք, քանի որ չի ցանկացել ծառայել այնտեղի զինծառայողների հետ: Բացի այդ, դեպքին նախորդած օրերին զորամասում երկու զինծառայակիցների հետ խնդիրներ է ունեցել, նվաստացումների է ենթարկվել:

Ըստ եղբոր՝ զինծառայողը տևական ժամանակ աշխատավարձ չի ստացել: Նա հավանական է համարելում այն հանգամանքը, որ եղբոր ձեռքից վերցրել են գումարը: Գևորգ Ավետյանը խոհարար է եղել, և ըստ եղբոր, ծառայակիցները նրան քնից հանել են նախաճաշի ժամից շուտ, ստիպել են ուտելիք պատրաստել: Եղբայրը հավելել է նաև, որ քաղաքացիական անձինք հաճախակի բարձրացել են դիրքեր, «կեր ու խում» կազմակերպել:

Նոյեմբերի 24-ին ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամյանը ֆեյսբուքյան իր էջում հրապարակել է մանրամասներ[98] դեպքի մասին, տեղեկացնելով, որ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ հինգերորդ կայազորային քննչական բաժնում նոյեմբերի 15-ին դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով, որի նյութերով հաջորդ օրը՝ նոյեմբերի 16-ին, հարուցվել է ևս մեկ քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 360.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ մասով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով: Նշված քրեական գործերը միացվել են մեկ վարույթում:

Նոյեմբերի 16-ին վերոնշյալ հանցագործությունները կատարելու կասկածանքով ձերբակալվել են զինծառայողի ծառայակիցներից երկուսը:

Նոյեմբերի 17-ին և 18-ին վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ նշանակվել են փորձաքննություններ, հարցաքննվել է մարտական հենակետի ողջ անձնակազմը:

Կատարված նախաքննության արդյունքում նոյեմբերի 19-ին նրանցից մեկին՝ պայմանագրային զինծառայող, շարքային Ա. Ս.-ին ՀՀ քրեական օրենսգրքի 360. 1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով մեղադրանք է առաջադրվել մարտական հերթապահություն կրելու ընթացքում շարքային Գ. Ավետյանի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորելու, նրա անձնական պատիվն ու

[96] https://factor.am/444157.html, https://armeniatoday.news/hy/armed-forces/388851/ , https://news.am/arm/news/673478.html
[97] https://www.azatutyun.am/a/31575488.html
[98] https://www.facebook.com/abrahamyangor79/posts/945068149461363, https://armenpress.am/arm/news/1069002.html

արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու, բռնություն գործադրելու միջոցով վերջինիս ինքնասպանության հասցնելու, զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու, նույն զորամասի պայմանագրային զինծառայողի ծեծի ենթարկելու, ֆիզիկական ցավ պատճառելու համար:

Իսկ մյուսին՝ պայմանագրային զինծառայող, շարքային Ա. Ա.-ին նույն օրը՝ նոյեմբերի 19-ին, մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու՝ մարտական հենակետում նույն զորամասի պայմանագրային զինծառայողի ծեծի ենթարկելու, ֆիզիկական ցավ պատճառելու:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական Գոռ Աբրահամյանի՝ նույն օրը միջնորդություն է ներկայացվել ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ 2 մեղադրյալների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ, որը բավարարվել է և զինծառայողները կալանավորվել են:

Ամփոփելով ինքնասպանության հետևանքով մահացության դեպքերը՝ նկատենք, որ դրանց թվի աճը պայմանավորված է կանոնադրային հարաբերությունների խախտմամբ: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը երկար տարիներ բարձրաձայնում է զինված ուժերում ոչ կանոնադրային հարաբերությունների առկայության և դրանց ողբերգական հետևանքների մասին:

Այնուամենայնիվ, իրավիճակը ՀՀ և ԱՀ/ԼՂ զինված ուժերում վկայում է այն մասին, որ զինծառայողների նկատմամբ վատ վերաբերմունքի պրակտիկան նվազելու միտում չունի:

Գ. Սպանություն

Դիրավորյալ

1. **Մովսես Թադևոսյան**

ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության համաձայն՝ 2021թ. դեկտեմբերի 31-ին, ժամը 10:50-ի սահմաններում, Վայոց Ձորի մարզում տեղակայված ՀՀ ՊՆ զորամասերից մեկի մարտական հենակետերից մեկում հայտնաբերվել է նույն զորամասի ժամկետային զինծառայող, շարքային Մովսես Արամայիսի Թադևոսյանը (ծնվ. 2003թ.)՝ գլխի մասում հրազենային վիրավորումով: Հիվանդանոց տեղափոխելու ճանապարհին զինծառայողը մահացել է[99]:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի նախնական տեղեկությունների՝ Մովսես Թադևոսյանը հրազենային վիրավորում է ստացել աջ հոնքի հատվածում: Նախաքննությամբ պարզվել է, որ Մ. Թադևոսյանին մահացու հրազենային վիրավորում է հասցրել համածառայակիցը: Վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին

[99] https://mil.am/hy/news/10247

մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը[100]:

Զենքի օգտագործման կանոնների խախտում (ԶՕԿ)

1. **Արտյոմ Մելքոնյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. մայիսի 4-ին, ժամը 20.00-ի սահմաններում, հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական դիրքում, հերթափոխի ընթացքում, ծառայակցի կողմից զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով արձակված կրակոցից մահացել է ժամկետային զինծառայող, շարքային Արտյոմ Հովիկի Մելքոնյանը[101]:

Պաշտոնական աղբյուրից Կազմակերպության կողմից ձեռք բերած տվյալների համաձայն դիպուկահար, պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արմեն Հակոբի Ալեքսանյանը, որպես դիտորդ մարտական հերթապահության ընդգրկված լինելով զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքում, դիրքի կացարանի մոտ զենքի լիցքաթափման ժամանակ կրակոց է արձակել նույն գումարտակի մարտական դիրքում որպես դիտորդ մարտական հերթապահության ընդգրկված պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Արտյոմ Հովիկի Մելքոնյանի գլխին:

ՀՀ ՔԿ կողմից տարածված տեղեկատվության համաձայն դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով՝ զենքի, ռազմամթերքի և շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող առարկաների, նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ[102]: Արմեն Ալեքսանյանը ձերբակալվել է:

2. **Սուրեն Ավետիսյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. նոյեմբերի 24-ին, ժամը 14:50-ի սահմաններում, հայ-ադրբեջանական սահմանի հյուսիսարևելյան հատվածում տեղակայված մարտական հենակետում հայտնաբերվել է ժամկետային զինծառայող, շարքային Սուրեն Ռոմանի Ավետիսյանի (ծնվ. 2001թ.) դին: Հրազենային վնասվածքը եղել է գլխի շրջանում[103]:

ՀՀ ՔԿ-ի նախնական տվյալներով զինծառայողը վնասվածքն ստացել է ծառայակցի կողմից զենքի հետ վարվելու կանոնները խախտելու հետևանքով: Վերջինս ձերբակալվել:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասով[104]:

«armlur.am» [105] կայքի տեղեկություններով Սուրեն Ավետիսյանը Երևանից էր: Ապրում էր Նորագյուղում:

---

[100] https://www.investigative.am/news/view/mtadevosyani-veraberyal.html
[101] https://mil.am/hy/news/9350
[102] https://www.investigative.am/news/view/zincarayogh-artyom-melqonyan.html
[103] https://mil.am/hy/news/10139
[104] https://www.investigative.am/news/view/zincarayox-suren-avetisyan.html

Չնայած այն հանգամաքին, որ զինված ուժերում պարբերաբար արձանագրվում են զինծառայողների կողմից զենքի օգտագործման կանոնների խախտման հետևանքով մահացության դեպքեր, այնուամենայնիվ այս պատճառով զինծառայողների մահվան դեպքերը վկայում են այն մասին, որ հրամանատարական կազմի կողմից բավարար ջանքեր չեն գործադրվում զինծառայողներին զենքի օգտագործման կանոնների ուսուցման և պատշաճ պահպանման ուղղությամբ:

Սպանություն/ Մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտում

1. Արթուր Ղազարյան

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. հուլիսի 16-ին, ժամը 21:40-ի սահմաններում, մարտական հերթապահության ընթացքում, ծառայակցի կողմից անզգուշությամբ արձակված կրակոցից մահացել է պարտադիր ժամկետային զինծառայող, 2001 թ. ծնված շարքային Արթուր Խաչատուրի Ղազարյանը[106]:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության հինգերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է քրեական գործ: Ձերբակալվել է դիրքի ավագ, լեյտենանտ Հ.Ա-ն: Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է[107]:

2. Գրիգոր Վարդանյան

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. նոյեմբերի 7-ին, ժամը 04:20 սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի մարտական հենակետում հրազենային վնասվածքից մահացել է ժամկետային զինծառայող, կրտսեր սերժանտ, 2001թ. ծնված Գրիգոր Սահակի Վարդանյանը[108]:

ՀՀ ՔԿ տարածած հաղորդագրության համաձայն՝ դիրքի ավագ Գրիգոր Վարդանյանը հրազենային վնասվածքն ստացել է զորամասի մարտական դիրքի ճաշարանում ծառայակցի կողմից մարտական հերթապահության իրականացման կանոնները խախտելու արդյունքում և մահացել՝ հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է քրեական գործ[109]: Կատարվում է քննություն:

3. Մկրտիչ Հովակիմյան (ՊՆ տվյալ)/ Հովակյան (զինվորական կենտրոնական դատախազության տվյալ)

---

[105] https://armlur.am/1150328/
[106] https://mil.am/hy/news/9659
[107] https://www.investigative.am/news/view/zincarayox-artur-xazaryan.html
[108] https://mil.am/hy/news/10081
[109] https://www.investigative.am/news/view/zincarayogh-g-vardanyan.html

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. սեպտեմբերի 13-ին, ժամը 22:00-ի սահմաններում, ՀՀ հարավ-արևելյան ուղղությամբ տեղակայված մարտական հենակետերից մեկում, նախնական տվյալներով՝ մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտման հետևանքով հրազենային վնասվածք ստանալու հետևանքով մահացել է պահեստազորի սերժանտ, 1978թ. ծնված Մկրտիչ Սերյոժայի Հովակյանը[110]:

Ըստ լրատվամիջոցներից մեկի՝ Մկրտիչ Հովակյանը Հայաստանի Դուքենդո ֆեդերացիայի Վայքի տարածքի ղեկավարն էր[111]:

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է քրեական գործ: Կատարվում է նախաքննություն[112]:

4. **Լևոն Սուքիասյան**

Պաշտոնական աղբյուրի կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թ. սեպտեմբերի 13-ին՝ ժամը 22:00–իր սահմաններում, ՀՀ ՊՆ 99097 զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրքերից մեկում որպես դիտորդ ծառայության նշանակված նույն զորամասի պահեստազորային, շարքային Կարեն Ռոբերտի Խաչատուրովը առանց բավարար հիմքերի ենթադրելով, որ դիրքի վրանի ուղղությամբ անձինք ադրբեջանական զինված ուժերի ուժերի զինծառայողներ են՝ իրեն ամրակցված գնդացրից կրակոցներ է արձակել նրանց ուղղությամբ, որի հետևանքով նույն մարտական դիրքի ավագի օգնական, սերժանտ Լևոն Արմենի Սուքիասյանը ստացել է մահացել է:

Դեպքի առթիվ ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Նախաքննությունը շարունակվում է:

Սպանություն՝ երկու կամ ավելի անձանց

1. **Մուրադ Մուրադյան**
2. **Լևոն Հարությունյան**
3. **Գոռ Սահակյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. օգոստոսի 19-ին, ժամը 02:15-ի սահմաններում, Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Կոռնիձոր գյուղի հենակետում հայտնաբերվել են շարքայիններ, 2002թ. ծնված Մուրադ Աշոտի Մուրադյանի, 2002 թ. ծնված Լևոն Ռաֆաելի Հարությունյանի, և 2002թ. ծնված Գոռ Արտակի Սահակյանի դիերը[113]:

---

[110] https://www.mil.am/hy/news/9928?fbclid=IwAR1cbbMk5Zviqe4Dm-QG5thGjz_bGXxoggJ2-arSy7L5iTrV0RI8KnkZcr0
[111] https://bavnews.am/%D5%BD%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%AB%D6%84%D5%B8%D6%82%D5%B4-%D5%B4%D5%A5%D6%80-%D5%BD%D5%A1%D5%B0%D5%B4%D5%A1%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D5%BA%D5%A1%D5%B7%D5%BF%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A5%D5%AC/
[112] https://investigative.am/news/view/zinvori-mah-syunik.html
[113] https://www.mil.am/hy/news/9808

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության երկրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ[114]:

«armenpress.am»-ին Քննչական կոմիտեից փոխանցած տվյալների համաձայն՝ ապօրինաբար դիտավորությամբ զինծառայողներին կյանքից զրկելուն դրդելու և ծառայակցի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու կասկածանքով ձերբակալվել է դիրքի ավագ Ա.Հ.-ն[115]:

Սպանություն՝ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով

1. **Սենիկ Արզումանյան**

Ըստ ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության՝ 2021 թ. դեկտեմբերի 10-ին, ժամը 19:30-ի սահմաններում, ՀՀ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում, նախնական տվյալներով՝ համածառայակցի կողմից արձակված կրակոցներից մահացել է ժամկետային զինծառայող, շարքային Սենիկ Աշոտի Արզումանյանը (ծնվ. 2002թ.)[116]:

ՀՀ քննչական կոմիտեի[117] զինվորական քննչական գլխավոր վարչության իններորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 6-րդ կետերով հարուցվել է քրեական գործ՝ Սենիկ Արզումանյանի մահվան և ևս երկու պարտադիր ժամկետային զինծառայողի հրազենային վիրավորում պատճառելու դեպքի առթիվ:

ՀՀ ՔԿ տվյալի համաձայն՝ ձերբակալվել է ծառայակից ժամկետային զինծառայողներից մեկը: Հետագայում զինծառայողի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը[118]:

«ArmLur.am»-ի[119] տեղեկություններով՝ մինչ միջադեպը զորամասի ներսում զինծառայողների միջև մի քանի օր վեճ և ծեծկռտուք է տեղի ունեցել: Վիճաբանության պատճառը, ըստ լրատվամիջոցի, գումարն է եղել: Մասնավորապես՝ ժամկետային զինծառայողներից ամեն ամիս գումար են պահանջել, սակայն լրատվամիջոցը չի հայտնում գումար պահանջելու պատճառների մասին: Ըստ լրատֆվամիջոցի ձեռք բերած տվյալի՝ ավագի օգնականը 50 հոգանոց զորքի մեջ սկսել է անկանոն կրակել:

«News.am»-ի տվյալներով՝ Սենիկ Արզումանյանը ինն ամսվա զինծառայող էր: Ծառայում էր Ագարակում: Ընտանիքի միակ զավակն էր[120]:

Դ. Առողջական խնդիրներ

Ծառայության հետ կապված

1. **Ռաֆիկ Թաթոսյան**

[114] https://mil.am/hy/news/9818 , https://www.investigative.am/news/view/ereq-zincarayoxi-spanutyun.htm
[115] https://armenpress.am/arm/news/1061411.html?fbclid=IwAR172hWbg2VUcaIIx-H7_Ng0nfis1LGWVIEsZkeAuyg0syjcv4sd5ZyVK58
[116] https://mil.am/hy/news/10194
[117] https://investigative.am/news/view/zincarayogh-spanutyun.html
[118] https://investigative.am/news/view/senik-arzumanyan-spanutyun.html
[119] https://armlur.am/1154056/?fbclid=IwAR0LV1HU8BG2YrGq3bM9H-OhGt8DUg-xicJPcnICM4Btlcnv0vzYU8irXF4
[120] https://hayeli.am/?p=659332&l=am

ԱՀ/ԷՂ պաշտպանության նախարարության տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021 թ. հունվարի 12-ին՝ ժամը 18:25-ի սահմաններում, հիվանդության հետևանքով (նախնական՝ սիրտ-թոքային անբավարարություն) մահացել է ՊԲ արևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի ժամկետային զինծառայող, շարքային 2002 թ. ծնված Ռադիկ Էդգարի Թաթոսյանը[121]:

ՀՀ քննչական կոմիտեն հրապարակել է դեպքի մանրամասները, համաձայն որոնց՝ Ռադիկ Թաթոսյանը ԱՀ բժշկական կենտրոն է ընդունվել 2021 թ. հունվարի 12-ին՝ ժամը 14:50-ին «երկկողմանի թոքաբորբ, սուր միոկարդիտ, COVID-19 հարցական» ախտորոշմամբ: Նույն օրը՝ ժամը 18:25-ին, ԱՀ ԲԿ-ում զինծառայողը մահացել է[122]:

Կազմակերպության պաշտոնական աղբյուրից ստացված տվյալներով՝ զինծառայողը հունվարի 12-ին ժամը 06:30-ի սահմաններում առողջական վիճակի վատթարացման արդյունքում դիմել է զորամասի բուժկետ, սակայն ժամանակին չի ներկայացվել համապատասխան հետազոտության, ինչի հետևանքով վերջինիս ինքնազգացողությունը ավելի է վատացել է, և նա տեղափոխվել է Մարտունու զինվորական հոսպիտալ, որտեղ ևս բավարար հետազոտություն չի իրականացվել: Ապա Ռ. Թաթոսյանը տեղափոխվել է Ստեփանակերտի «Հանրապետական բժշկական կենտրոն», որտեղ «սպասարկում իրականացնող համապատասխան անձանց կողմից դրսևորվել է անփույթ վերաբերմունք՝ բժշկական մասնագիտական պարտականությունները ոչ պատշաճ կատարելով, ինչի արդյունքում զինծառայողը մահացել է»:

Զինծառայողի մահվան դեպքով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով (անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ) և ՀՀ քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի 2-րդ մասով (բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ): Կատարվում է քննություն:

2. Էդվարդ Կիրակոսյան

Ըստ ՀՀ ՊՆ տարածած հաղորդագրության՝ 2021 թ. փետրվարի 8-ին, ժամը 12.40-ի սահմաններում, ՀՀ հյուսիսարևելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասում հանկարծամահ է եղել պայմանագրային զինծառայող, շարքային Էդվարդ Կառլենի Կիրակոսյանը[123]:

Դեպքի փաստով քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

[121] https://nkrmil.am/news/view/3186
[122] http://investigative.am/news/view/radik-tatosyan.html
[123] https://mil.am/hy/news/8902

Ծառայության հետ չկապված

1. **Գեղամ Գրիգորյան**

Սպա Գեղամ Գրիգորյանի մահվան դեպքն արձանագրվել է 2021 թ. մարտի 13-ին «Էրեբունի» ԲԿ-ում:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից:

2. **Արսեն Մարգարյան**

Պայմանագրային զինծառայող Արսեն Մարգարյանի մահացել է 2021 թ. մարտի 21-ին՝ տանը:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից:

3. **Կարապետ Սարգսյան**

Սպա Կարապետ Սարգսյանի մահվան դեպքն արձանագրվել է «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում 2021 թ. մայիսի 10-ին:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնի կողմից:

4. **Տիգրան Բաբայյան**

Ենթասպա Տիգրան Բաբայյանը մահացել է 2021 թ. մայիսի 15-ին՝ ԱՀ/ԼՂ բժշկական կենտրոնում:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով։

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից։

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ ոստիկանության քննչական վարչության կողմից։

5. **Արթուր Գրիգորյան**

Սպա Արթուր Գրիգորյանը հանկարծամահ է եղել 2021 թ. հունիսի 26-ին՝ Այգեձոր գյուղի իր հողամասում հանգստի մեջ գտնվելիս։

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով։

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից։

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տավուշի բաժնի կողմից։

6. **Ասատուր Մելքոնյան**

Պայմանագրային զինծառայող Ասատուր Մելքոնյանը, գտնվելով արձակման մեջ, հայտնաբերվել է մահացած 2021 թ. հունիսի 28-ին իր բնակարանում։ Նախնական ախտորոշումը՝ «ինֆարկտ»։

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով։

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից։

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Եղեգնաձորի բաժնի կողմից։

7. **Էդգար Ուռուսյան**

Պայմանագրային զինծառայող Էդգար Ուռուսյանը մահացել է 2021 թ. օգոստոսի 20-ին՝ Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանական կենտրոնում։

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով։

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել այլ աղբյուրից, և դեպքի փաստը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից։

Ըստ ՀՀ գլխավոր դատախազությունից Կազմակերպությանը տրամադրած տեղեկության՝ Էդգար Ուռուսյանը «դեպքի պահին չի գտնվել փաստացի զինվորական ծառայության մեջ»:

Դեպքի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել:

8. Վլադիմիր Պետրոսյան

Պայմանագրային զինծառայող Վլադիմիր Պետրոսյանը մահացել է 2021 թ. սեպտեմբերի 9-ին տանը:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ Ստեփանակերտի քաղաքային ոստիկանության վարչության կողմից:

9. Արարատ Տեր-Թարխանյան

Սպա Արարատ Տեր-Թարխանյանը մահացել է 2021 թ. սեպտեմբերի 29-ին՝ տանը: Մահվան պատճառ է հանդիսացել քաղցկեղը:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել այլ աղբյուրից, և դեպքի փաստը հաստատվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազությունից Կազմակերպությանը տրամադրած տեղեկության՝ Արարատ Տեր-Թարխանյանը «դեպքի պահին չի գտնվել փաստացի զինվորական ծառայության մեջ»:

Դեպքի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել:

10. Մինաս Մուրադյան

Սպա Մինաս Մուրադյանը մահացել է 2021 թ. հոկտեմբերի 8-ին «Մեղլայն» ԲԿ-ում:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի կողմից:

11. Մարիամ Մելիքյան

Ենթասպա Մարիամ Մելիքյանը մահացել է 2021 թ. հոկտեմբերի 9-ին «Վանաձոր» ԲԿ-ում այն բանից հետո, երբ ինքնազգացողությունը վատանալու հետևանքով վերջինս տեղափոխվել է այնտեղ:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Տարոնի բաժնի կողմից:

12. Սուրեն Աղաջանյան

Պայմանագրային զինծառայող Սուրեն Աղաջանյանը մահացել է 2021 թ. հոկտեմբերի 13-ին «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ-ում:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Նոր Նորքի բաժնի կողմից:

13. Վարշամ Թադևոսյան

Սպա Վարշամ Թադևոսյանը մահացել է 2021 թ. հոկտեմբերի 23-ին սրտի կաթվածից:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից:

14. Լևոն Հովսեփյան

Պայմանագրային զինծառայող Լևոն Հովսեփյանը մահացել է 2021 թ. նոյեմբերի 11-ին՝ երթուղային ավտոբուսում ինքնազգացողության վատանալու պատճառով: Մասնավորապես՝ զինծառայողը մահացել է ՀՀ ՄԱրտունի քաղաքից Երևան տեղափոխվելիս՝ շտապօգնության մեքենայում:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության ԳՄՎ ոստիկանության Մարտունու բաժնի կողմից:

15. Անահիտ Զրվանդյան

Պայմանագրային Անահիտ Զրվանդյանը մահացել է 2021 թ. դեկտեմբերի 13-ին՝ տանը:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից:

Այսպես, 2021 թ. առողջական խնդիրների հետևանքով մահացության 15 դեպքերից միայն 2-ն են դասակարգվել որպես զինվորական ծառայության հետ կապված: Ընդ որում՝ դրանցից մեկ դեպքում պայմանագրային զինծառայողը հանկարծամահ է եղել ծառայության վայրում, մյուս դեպքում ժամկետային զինծառայողը մահացել է ոչ պատշաճ տրամադրված բուժօգնության հետևանքով:

Ակնհայտ է, որ առողջական խնդիրների հետեւանքով մահվան դեպքերի պատճառ կարող է հանդիսանալ ոչ պատշաճ բուժզննության ապահովումը կամ զորակոչային ժամանակահատվածում, կամ զինվորական ծառայություն իրականացնելու ընթացքում:

Ե. Ավտովթար

Ծառայության հետ կապված

1. Արման Համբարյան

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տարածված հաղորդագրության, 2021 թ. մայիսի 20-ին, ժամը 19:00-ի սահմաններում, զորամասերից մեկի զրահափոխադրիչը, մշտական տեղակայման վայրից կիրառման շրջաններ ընթանալիս, դուրս է եկել ճանապարհի երթևեկելի հատվածից և մոտ 100 մետր գլորվել ձորը: Վթարի հետևանքով ստացած մարմնական վնասվածքներից մահացել է զրահափոխադրիչի մեխանիկ-վարորդ, ժամկետային զինծառայող Արման Վահրամի Համբարյանը[124]:

[124] https://mil.am/hy/news/9444

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասով՝ մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

ՀՀ ՔԿ կողմից տարածված տեղեկատվության համաձայն, կատարվում է նախաքննություն[125]:

Մտահոգիչ է ավտովթարի հետևանքով մահվան դեպքերի փաստը:

Կարելի է ենթադրել, որ 18-20-ամյա պարտադիր ժամկետային զինծառայողների կողմից ծանր մարտական մեքենաներ վարելու պատշաճ հրահանգավորում չի իրականացվում: Կարևոր է, որ զինծառայողները մինչ ծանր մարտական մեքենաներ վարելը անցնեն համապատասխան և ամբողջական վերապատրաստում:

Վրաերթ

2. **Լևոն Մկրտումյան**
3. **Արամ Բաղալյան**

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության՝ 2021 թ. ապրիլի 15-ին ապրիլի 15-ին, ժամը 02.00-ի սահմաններում, Կոտայքի մարզի Արամուս գյուղի մոտակայքում վրաերթի են ենթարկվել զինծառայողներ, ինչի հետևանքով պայմանագրային զինծառայողներ, ավագ սերժանտ Արամ Վահանի Բաղալյանը (ծնվ. 1988թ.) և կրտսեր սերժանտ Լևոն Սամվելի Մկրտումյանը (ծնվ. 1992թ.) տեղում մահացել են[126]:

Shamshyan.com կայքի տվյալներով՝ զինծառայողներին վրաերթի ենթարկողը Կոտայքի մարզի բնակիչ 34-ամյա Կարեն Միքայելյանն է եղել, ով մեքենան վարել է ոչ սթափ վիճակում: Վերջինս փախուստի է դիմել՝ զինծառայողներին թողնելով անօգնական[127]:

ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների համաձայն՝ զինծառայողների մահվան փաստի առիթով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 3-րդ մասով (ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղված պահանջները կամ ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ) և 244 հոդվածի 1-ին մասով (ճանապարհատրանսպորտային պատահարի վայրը թողնելը)[128]:

Shamshyan.com կայքի տվյալներով՝ Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ վարորդի՝ Կարեն Միքայելյանի նկատմամբ որպես խափանման

[125] https://www.investigative.am/news/view/mahvan-elqov-vtar-zintexnika.html
[126] https://mil.am/hy/news/9235
[127] https://shamshyan.com/hy/article/2021/04/17/1184450/ , https://galatv.am/hy/2960119/
[128] https://galatv.am/hy/2960119/

միջոց է կիրառվել երկամսյա կալանքը[129]: Ըստ ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալների՝ գործը դատաքննության փուլում է:

Դեպքը զինվորական կենտրոնական դատախազության կողմից ներառվել է ավտովթարի հետևանքով մահացության դեպքերի թվում:

4. **Գրիգոր Հարությունյան**

«factor.am» կայքի տվյալներով՝ 2021 թ. հուլիսի 10-ին պայմանագրային զինծառայող Գրիգոր Հարությունյանը Երասխ-Երևան ավտոմայրուղում իր կողմից վարած «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայով բախվել է ՀՀ ՊՆ մեկ այլ զորամասի հաշվեկշռում գտնվող «Ուազ Պատրիոտ» մակնիշի ավտոմեքենային: Արդյունքում Գրիգոր Հարությունյանը հիվանդանոց տեղափոխվելու ճանապարհին մահացել է, ևս հինգ պայմանագրային զինծառայողներ մարմնական վնասվածքներով հոսպիտալացվել են[130]:

ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրած տվյալի համաձայն՝ դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242 հոդվածի 2-րդ մասով: Կատարվում է քննություն:

Ծառայության հետ չկապված

1. **Վրեժ Գրիգորյան**

Պայմանագրային զինծառայող Վրեժ Գրիգորյանը մահացել է 2021 թ. հունվարի 10-ին ժամը 03:0-ի սահմաններում իր վարած «մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով վթարի ենթարկվելու հետևանքով:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարատի քննչական վարչության Վեդիի բաժնի կողմից:

2. **Արսեն Մայիլյան**

Պայմանագրային զինծառայող Արսեն Մայիլյանը վթարի է ենթարկվել 2021 թ. հունվարի 13-ին ժամը 23:30-ի սահմաններում՝ իր վարած «Վազ 21-06» մակնիշի ավտոմեքենայով: Ընդունվելով ԱՀ/ԼՂ հանրապետական հիվանդանոց՝ զինծառայողը մահացել է 2021 թ. հունվարի 16-ին:

[129] https://shamshyan.com/hy/article/2021/04/17/1184450/
[130] https://factor.am/392310.html

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ Մարտունու շրջանային ոստիկանության կողմից:

3. **Մասիս Բալասանյան**

Պամանագրային զինծառայող Մասիս Բալասանյանը 2021 թ. հունվարի 20-ին ժամը 17:40-ի սահմաններում իրեն պատկանող «Լադա» մակնիշի ավտոմեքենայով բախվել է բետոնե սյանը և հիվանդանոց տեղափոխվելիս մահացել:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ քննչական կոմիտեի կողմից:

4. **Հովհաննես Մխիթարյան**

2021 թ. մայիսի 21-ին պայմանագրային զինծառայող Հովհաննես Մխիթարյանը, գտնվելով հանգստի մեջ, իր վարած «Վազ 21732» մակնիշի ավտոմեքենայով Երևան-Սևան ավտոճանապարհին բախվել է «Զիլ 131» մակնիշի շարժական գազալիցքավորվող բեռնատար ավտոմեքենային, ինչի հետևանքով տեղում մահացել է:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է Գեղարքունիքի մարզային քննչական վարչության Սևանի քննչական բաժնի կողմից:

5. **Եղիշե Մանուկյան**

Պայմանագրային զինծառայող Եղիշե Մանուկյանը 2021 թ. մայիսի 28-ին ժամը 00:30-ի սահմաններում իր վարած «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և գլորվել ձորը, ինչի հետևանքով տեղում մահացել է:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ քննչական կոմիտեի կողմից:

6. **Վահագն Սահակյան**

Պայմանագրային զինծառայող Վահագն Սահակյանը 2021 թ. հունիսի 15-ին իր վարած «Օպել» մակնիշի ավտոմեքենայով Ոսկետափ-Երևան ավտոճանապարհի հատման հատվածում դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և կողաշրջվել, ինչի հետևանով տեղում մահացել է:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության կողմից:

7. **Արամ Միրզոյան**

Սպա Արամ Միրզոյանը Արարատի մարզում իր կողմից վարած Նիվա մակնիշի մեքենայով վթերի է ենթարկվել և տեղում մահացել 2021 թ. հուլիսի 24-ին[131]:

ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազության տվյալներով՝ քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

8. **Մարգարիտա Թադևոսյան**

Ենթասպա Մարգարիտա Թադևոսյանը 2021 թ. սեպտեմբերի 9-ին գտնվել է քաղաքացիական անձի կողմից վարած մեքենայում՝ որպես ուղևոր, երբ Ստեփանակերտ-Վանք ավտոճանապարհին տեղի է ունեցել վթար, ինչի հետևանքով Մարգարրի Թադևոսյանը տեղում մահացել է:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ տարածքային քննչական վարչության կողմից:

9. **Դավիթ Հակոբյան**

[131] https://shamshyan.com/hy/article/2021/07/24/1192115/

Սպա Դավիթ Հակոբյանը մահացել է 2021 թ. նոյեմբերի 10-ին՝ վթարի հետևանքով, երբ որպես ուղևոր գտնվել է այլ անձի վարած «Օպել-Զաֆիրա» մակնիշի անտոմոբիլում:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային վարչության Գորիսի քննական բաժնի կողմից:

10. Կարեն Գաբոյան

Պայմանագրային զինծառայող Կարեն Գաբոյանը մահացել է 2021 թ. դեկտեմբերի 3-ին՝ իր վարած «Մերսեդես» մակնիշի անտոմոբիլով:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզի Թումնայանի քննչական բաժնի կողմից:

11. Երեմ Աբրահամյան

Պայմանագրային զինծառայող Երեմ Աբրահամյանը մահացել է 2021 թ. դեկտեմբերի 27-ին՝ իր կողմից վարած «Տոյոտա» Մերսեդես» մակնիշի անտոմոբիլով վթարի ենթարկվելով:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հատնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ԱՀ ՔԿ կողմից:

Զ. Դժբախտ պատահար

Զինվորական ծառայության հետ կապված

Կայծակնահարում

1. **Մերգեյ Շահնազարյան**

ՀՀ պաշտպանության նախարարության տարածած հաղորդագրության համաձայն՝ 2021 թ. հունվարի 15-ին մարտական դիրքի կացարանում կայծակնահարվել և մահացել է պայմանագրային զինծառայող, շարքային Սերգեյ Շահնազարյանը[132]*:*

ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկատվության համաձայն, զինծառայողի մահվան փաստի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով: Հետագայում քրեական գործի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

Զնահյուս

2. Աղասի Հովհաննիսյան

ՀՀ պաշտպանության նախարարության տարածած տեղեկատվության համաձայն՝ 2021 թ. մարտի 21-ին, խիստ ձնաբքի պայմաններում, ՀՀ ԶՈՒ N զորամասի մարտական հենակետից մյուս հենակետ անցնելու ընթացքում կորել է կապը երկու պայմանագրային զինծառայողի՝ Կարեն Շահնազարյանի և Աղասի Հովհաննիսյանի հետ[133]*:*

Որոնողափրկարարական աշխատանքների արդյունքում մարտի 22-ին զինծառայողները գտնվել են: Զինծառայողներից մեկը՝ Աղասի Հովհաննիսյանը մահացել է: Մյուս զինծառայողը՝ Կարեն Շահնազարյանը ծանր վիճակով տեղափոխվել է զինվորական հոսպիտալ[134]:

29-ամյա Աղասի Հովհաննիսյանը Արագածոտնի մարզի Արագածավան համայնքից էր: Համայնքի ղեկավարը լրատվամիջոցներից մեկին՝ 168.am կայքին հայտնել է, որ իրեն հասած տեղեկությունների համաձայն՝ մարտական դիրքում հացը վերջացած է եղել, զինծառայողները գնացել են ներքևում գտնվող մարտական դիրքից հաց բերելու և մոլորվել են[135]:

Ըստ «Արմենիա Սպուտնիկ» կայքի՝ Աղասի Հովհաննիսյանը ծառայում էր ԱՀ/ԼՂ զորամասերից մեկում: 2020 թ. պատերազմական գործողություններից հետո տեղափոխվել էր Ջերմուկի զորամաս[136]:

ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազության կողմից Կազմակերպությանը տրամադրված տեղեկատվության համաձայն, զինծառայողի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 3-րդ մասով՝ անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ (ռազմական դրության, պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում):

---

[132] https://armenpress.am/arm/news/1046544.html
[133] https://mil.am/hy/news/9112
[134] https://mil.am/hy/news/9117
[135] https://168.am/2021/03/24/1483745.html
[136] https://armeniasputnik.am/armenia/20210322/26885129/korel-e-kapy-erku-payjmanagrayin-zintsarayoxi-het.html

Հարուցված քրեական գործի նախաքննությունը կարճվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ արարքի մեջ հանցակազմի բացակայության հիմքով:

Զինվորական ծառայության հետ չկապված

Ծառի տապալման հետևանքով

1. **Էդիկ Չատյան**

Պայմանագրային զինծառայող Էդիկ Չատյանը մահացել է՝ արձակուրդում գտնվելու ժամանակ՝ 2021 թ. հունվարի 15-ին Տավուշի մարզի Այգեձոր գյուղի անտառում ծառ կտրելիս, երբ ծառը վրան է ընկնել:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով և ո՛չ էլ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հայտնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ՔԿ Բերդի քննչական բաժնի կողմից:

Մեքենան նորոգելիս դետալը հարվածել է գլխին

2. **Աշոտ Սարդարյան**

2021 թ. մայիսի 28-ին բժշկական հաստատությունում մահացել է պահեստազորի սպա Աշոտ Սարդարյանը:

Ավտոմեքենայի վրա գազի կարգավորման աշխատանքներ կատարելիս շարժիչից պոկված դետալը հարվածել է գլխի ձախ քունքային հատվածին, որն էլ հանդիսացել է մահվան պատճառը:

Նշենք, որ դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ լրատվամիջոցներով:

Դեպքի մասին չի տեղեկացվել նաև ՀՀ գլխավոր դատախազությանն ուղղված հարցման պատասխանով: Կազմակերպությունը զինծառայողի մահվան դեպքի մասին տեղեկացել է այլ պաշտոնական աղբյուրից:

Նույն աղբյուրից հայտնի է նաև, որ քրեական գործի հարուցումը մերժվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Հանկարծամահ

3. **Աշոտ Ղարիբյան**

Պայմանագրային զինծառայող Աշոտ Ղարիբյանը քնած ժամանակ հանկարծամահ է եղել 2021 թ. սեպտեմբերի 11-ին՝ գտնվելով տանը:

ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազության տվյալներով՝ վերջինս դեպքի օրն ալկոհոլ է օգտագործել:

Դեպքի մասին հաղորդագրություն չի տարածվել ո՛չ պաշտոնական աղբյուրներով, ո՛չ զանգվածային լրատվամիջոցներով:

Կազմակերպությանը դեպքի մասին հայտնի է դարձել ՀՀ զինվորական կոնտրոնական դատախազությունից:

Հայտնի է, որ դեպքով վարույթն իրականացվել է ՀՀ ոստիկանության Սիսիանի բաժնի կողմից:

«Զինվորական ծառայության հետ կապված» դասակարգված դժբախտ պատահարների հետևանքով մահվան երկու դեպքերից մեկը կայծակնահարման հետևանքով է, մյուսը՝ ձնահյուսի տակ մնալու: Երկու դեպքում էլ մահացել են պայմանագրային զինծառայողներ:

Մտահոգիչ է հանգամանքը, որ նման դեպքերի արդյունքում զինծառայողների մահվան դեպքեր շարունակում են արձանագրվել ամեն տարի, ինչը վկայում է ծառայության անվտանգության կանոնների շարունակական չպահպանման կամ դրանց պահպանման հրահանգավորման աշխատանքների թերությունների մասին, որն անընդունելի է: